ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Միավորված ազգերի կազմակերպության կողմից սահմանված շրջանակներում

ՍՕՍ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ
Սիրող ընտանիք յուրաքանչյուր երեխայի համար

Հատելով երեխաներին ու ընտանիքներին աջակցելու և ծառայություններ մատուցելու սահմանները

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ «ՍՕՍ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ»

Միջազգային «ՍՕՍ մանկական գյուղերը» հովանի կազմակերպություն է ավելի քան 130 «ՍՕՍ մանկական գյուղեր» ազգային ընկերակցությունների համար ամբողջ աշխարհում: «ՍՕՍ մանկական գյուղերը» ոչ կառավարական և ոչ աղանդավորական, երեխայակենտրոն կազմակերպություն է, որը խնամքի, կրթության և առողջապահական ոլորտում մատուցում է ուղղակի ծառայություններ՝ առանց ծնողական խնամքի մնացած կամ ծնողական խնամքը կորցնելու վտանգի շեմին կանգնած երեխաների համար: Կազմակերպությունը նաև զարգացնում է երեխաներին խնամողների, նրանց ընտանիքների և համայնքի կարողությունները՝ լիարժեք խնամք իրականացնելու համար:

Միջազգային «ՍՕՍ մանկական գյուղերն» իրականացնում է առանց ծնողական խնամքի մնացած կամ ծնողական խնամքը կորցնելու վտանգի շեմին կանգնած երեխաների իրավունքների պաշտպանությունը: Հիմնադրվել է 1949 թ.՝ առաջնորդվելով ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով:
www.sos–childrensvillages.org

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (ՄՍԾ)

Միջազգային սոցիալական ծառայությունն (ՄՍԾ) օգնում է անհատներին, երեխաներին և նրանց ընտանիքներին՝ դիմակայելու սոցիալական խնդիրներին: ՄՍԾ-ն ներգրավում է երկու կամ ավելի երկրներ, որոնք նման խնդիրների առաջ են կանգնել միջազգային միգրացիայի կամ տեղաշարժի հետևանքով: Որպես շահույթ չհետապնդող միջազգային կազմակերպություն՝ գրանցվել է 1924 թ., ծավալել ակտիվ գործունեություն 140 երկրներում և մատուցել ծառայություններ ավելի քան 50 000 անհատների ողջ աշխարհում:

ՄՍԾ-ն լայն համատեքստով մշակել է հատուկ իրավասությունների շրջանակ՝ կանխելու լքվածությունն ու տեղայնացումը, աջակցելու ընտանիքների ձևավորմանը, հարգելու խնամատար և կենսաբանական ընտանիքներում ապրող երեխաներին: www.iss–ssi.org

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

4 ՆԱԽԱԲԱՆ
5 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

6 I. ՆՊԱՏԱԿ
6 II. ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ
Երեխան և ընտանիքը
Այլընտրանքային խնամք
Կիրառումը խթանելու միջոցները
10 III. ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ
11 IV. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ
Ծնողական խնամքի խթանում
Ընտանիքի բաժանման կանխարգելում
Ընտանիքի վերամիավորման խթանում
15 V. ԽՆԱՄՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ
16 VI. ԽՆԱՄՔԻ ԱՌԱՎԵԼ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՏԵՍԱԿԻ ՈՐՈՇՈՒՄ
18 VII. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ
Ռազմավարություններ
– Ոչ ֆորմալ խնամք
– Ցանկացած տեսակի ֆորմալ այլընտրանքային խնամքի դիմելու ընդհանուր պայմաններ
Իրավական պատասխանատվություն երեխայի նկատմամբ
– Երեխայի խնամքի համար պատասխանատու կազմակերպություններ և հաստատություններ
– Խնամատար ընտանիքներ
Խնամք հաստատության ներքո
Վերահսկում և մոնիթորինգ
Աջակցություն խնամքից հետո
27 VIII. ԻՐԵՆՑ ՀԱՄԱՐ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԿՐԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ
Երեխաների խնամքն իրենց երկրից դուրս
Արդեն իսկ երկրից դուրս գտնվող երեխայի խնամքի իրականացումը
28 IX. ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ
Ուղեցույցի կիրառումը
Առանձնացման կանխարգելում
Խնամքի կազմակերպում
Որոնման աշխատանքներ և ընտանիքի վերամիավորում

31 ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀՂՈՒՄՆԵՐ

ՆԱԽԱԲԱՆ

Ողջ աշխարհի միլիոնավոր երեխաներ, անկախ այն հանգամանքից՝ գտնվում են ռիսկային խմբում, թե ոչ, իրենց առօրյա կյանքում հանդիպում են մեծ դժվարությունների, որոնք շատ հաճախ շարունակվում են նաև հասուն տարիքում:

ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների պաշտպանության կոնվենցիան և ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների պաշտպանության կոմիտեն գիտակցում են, որ երեխաների և ընտանիքների դժվարությունները լիարժեք չեն բացահայտվում, հետևաբար հաշվի չեն առնվում ռազմավարության մեջ և գործնականում:

Երեխայի իրավունքների ապահովումն իրականացնելու բացթողումները դրդեցին Կոմիտեին 2005 թ. կազմակերպելու Ընդհանուր քննարկման օր՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հիմնախնդիրների վերաբերյալ: Քննարկման արդյունքում կոմիտեն մշակեց հիմնական հանձնարարական, որով կոչ արեց պետություններին, միջազգային հանրությանը, ՄԱԿ-ի կազմակերպություններին, ՀԿ-ներին, փորձագետներին և մասնագիտացված կազմակերպություններին՝ միացյալ ուժերով մշակելու միջազգային չափորոշիչներ, որոնք պետություններին կտրամադրեն փորձագիտական ուղեցույցներ՝ տվյալ ոլորտում երեխաների իրավունքների պաշտպանության Կոնվենցիայի դրույթների իրականացման գործում:

Հետևաբար Կոմիտեն ջերմորեն ողջունում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2009 թ. նոյեմբերի 20-ին ընդունած՝ Երեխաների այլընտրանքային խնամքի մասին ուղեցույցը: Դա Կոմիտեի կողմից 2005 թ. կատարված աշխատանքների, ինչպես նաև արդյունավետ խորհրդատվության և բանակցությունների արդյունք է:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Բրազիլիայի կառավարությանը՝ «Ընկերների խմբին» առաջնորդելու և Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցի ճանաչման համար: Իհարկե, այս աշխատանքն անհնարին կլիներ առանց ՀԿ-ների և այլ գործընկերների նվիրական աշխատանքի, հատկապես Ժնևում գործող «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներով զբաղվող աշխատանքային խումբ» հասարակական կազմակերպության:

Հուսով եմ, որ Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցն արժեքավոր կլինի ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոնվենցիայի դրույթների իրականացման գործում: Ողջունում եմ այս հրապարակումը՝ որպես առաջին քայլ սույն Ուղեցույցի տարածման գործում:

Պրոֆեսոր Յանգի Լի
ՄԱԿ-ի՝ Երեխաների պաշտպանության կոմիտեի քարտուղար

Սեուլ, Կորեա,
նոյեմբերի 20, 2009 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2009 թ. նոյեմբերի 20-ին Միավորված ազգերի կազմակերպության՝ Երեխայի իրավունքների պաշտպանության կոնվենցիան և ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ՄԱԿ-ի 20-րդ տարեդարձի կապակցությամբ պաշտոնապես ընդունեցին Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցը: Մենք՝ միջազգային «ՍՈՍ մանկական գյուղերը» և Միջազգային սոցիալական ծառայությունը, խանդավառությամբ ողջունեցինք միջազգային գործունեության այս նոր շրջանակները: Դրանք կոչված են խթանելու երեխաների իրավունքների պաշտպանությունը և բարելավելու միլիոնավոր երեխաների, նրանց ընտանիքների և համայնքների կյանքն ամբողջ աշխարհում: Տարածումը խթանելու և իրականացնելու նպատակով սույն հրատարակությունը ներկայացնում է Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցի պաշտոնական տեքստը (Գլխավոր ասամբլեա A/RES/64/142) և արտացոլում է Ուղեցույցում ընդգծված որոշ հիմնական ոլորտներին առնչվող հարցեր:

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցն առաջացել է Երեխայի իրավունքների պաշտպանության Կոնվենցիայի իրականացման ընթացքում զգալի բացթողումների պատճառով, որոնք վերաբերում են ողջ աշխարհի երեխաներին՝ անկախ այն հանգամանքից՝ գտնվում են նրանք ռիսկային խմբում, թե ոչ, ինչպես նաև՝ նրանց խնամողներին: Հետևաբար, միջազգային հանրությունը մշակել է այդ Ուղեցույցը: Դա արդյունք է ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների պաշտպանության կոմիտեի, Բրազիլիայի իշխանությունների, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF), փորձագետների, ակադեմիկոսների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և փորձառու երիտասարդ խնամողների հինգ տարվա քննարկումների և բանակցությունների:

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցը մատնանշում է համապատասխան ռազմավարությունների և դրանց կիրառության անհրաժեշտությունը երկու հիմնական սկզբունքների վերաբերյալ՝ անհրաժեշտություն և համապատասխանություն: Անհրաժեշտություն ասելով՝ հասկանում ենք երեխաների խնամքի կազմակերպման աջակցությունն իրենց ընտանիքում: Նախքան երեխային իր կենսաբանական ընտանիքից հեռացնելը և նախքան նման որոշում կայացնելը անհրաժեշտ է իրականացնել մասնակցային գնահատում: Համապատասխանության սկզբունքի համար Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցը սահմանում է համապատասխան և այլընտրանքային խնամքի մի շարք տարբերակներ: Այլընտրանքային խնամքի կարիք ունեցող յուրաքանչյուր երեխա ունի կարճաժամկետ կամ երկարաժամկետ խմամքի կազմակերպման հատուկ պահանջներ: Ընտրված խնամքի տարբերակը պետք է համապատասխանեցվի երեխայի անհատական կարիքներին: Երեխայի տեղավորման վայրը պետք է պարբերաբար վերահսկվի՝ գնահատելու համար այլընտրանքային խնամքի շարունակելիությունը, ինչպես նաև ընտանիքի հետ վերամիավորվելու անհրաժեշտությունը:

ԻՆՉՊԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԱՅՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցի յուրաքանչյուր բաժնում դուք կարող եք գտնել հարցեր՝ կապված պետական ռազմավարության հետ: Եթե հարցերը ներառված չեն Ուղեցույցի պաշտոնական տեքստում, ապա դրանք պետք է իրականացվեն ազգային մակարդակում: Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցին հետևելը միայն դրական ազդեցություն կունենա երեխաների, նրանց ընտանիքների կյանքում և համայնքներում: Մենք պարտավորվում ենք խոսքը վերածել գործի:

Ռիչարդ Պիխլեր
Միջազգային «ՍՈՍ մանկական գյուղերի»
գլխավոր քարտուղար

Ժան Այուբ
Միջազգային սոցիալական ծառայության
գլխավոր քարտուղար

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

I. ՆՊԱՏԱԿ

1. Այս Ուղեցույցը նպատակ ունի բարձրացնելու երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի և միջազգային այլ փաստաթղթերի համապատասխան դրույթների իրականացումն այն երեխաների ապահովության և բարեկեցության վերաբերյալ, ովքեր զրկված են ծնողական խնամքից կամ գտնվում են նման վտանգի տակ:

2. Հիմք ընդունելով միջազգային փաստաթղթերի նախադրյալները և հաշվի առնելով այս ասպարեզում գիտելիքների և փորձի զարգացումը՝ Ուղեցույցը սահմանում է ռազմավարության և դրա կիրառման ցանկալի ուղենիշներ: Այն կառուցված է այլընտրանքային խնամքի հարցերի հետ ուղղակի կամ անուղղակի կապված բոլոր ոլորտներում լայն տարածման համար և ձգտում է՝

ա) աջակցելու, որ երեխաներին պահեն ընտանիքում կամ վերադարձնեն իրենց ընտանեկան խնամքին կամ դրա անհնարինության դեպքում գտնեն համապատասխան այլ՝ մշտական լուծում՝ ներառյալ որդեգրումը և քաֆալան՝ ըստ իսլամական իրավունքի:

բ) երաշխավորելու, որ մինչ այսպիսի մշտական լուծումներ գտնելը կամ այն դեպքերում, երբ դրանք հնարավոր չեն կամ չեն բխում երեխայի շահերից, այլընտրանքային խնամքի ամենահարմար ձևերը բացահայտված և ապահովված լինեն՝ երեխայի ամբողջական և ներդաշնակ զարգացումն ապահովելու պայմաններում,

գ) աջակցելու և քաջալերելու կառավարությանը՝ ավելի լավ կատարելու իր պարտականություններն ու պարտավորություններն այս կապակցությամբ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երկրի տնտեսական, սոցիալական և մշակութային պայմանները,

դ) առաջնորդելու բոլոր շահագրգիռ կողմերի ռազմավարությունը, որոշումները և գործունեությունը, ներգրավելու մասնավոր կառույցներին ու քաղաքացիական հասարակությանը՝ ապահովելու համար երեխաների բարեկեցությունն ու սոցիալական պայմանները:

II. ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ա. ԵՐԵԽԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԸ

3. Ընտանիքը՝ որպես հասարակության հիմք, բնական միջավայր է երեխաների աճի, բարեկեցության և ապահովության համար: Առաջարկվում է հիմնականում ջանքեր գործադրել՝ երեխաներին իրենց ծնողների կամ մոտ բարեկամների խնամքի տակ թողնելու կամ վերադարձնելու հնարավորություն ընձեռելու համար: Պետությունը պետք է երաշխավորի, որ ընտանիքները խնամք իրականացնելու գործում աջակցության հնարավորություն ունենան:

4. Յուրաքանչյուր երեխա և պատանի պետք է ապրի աջակցող, պաշտպանող և խնամող մթնոլորտում, որը լիովին նպաստում է նրա զարգացմանը: Ոչ բավարար խնամք ստացող կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները բարենպաստ մթնոլորտ չունենալու վտանգի տակ են:

5. Եթե երեխայի սեփական ընտանիքն անկարող է նույնիսկ համապատասխան աջակցության դեպքում երեխային ապահովելու անհրաժեշտ խնամքով, լքում է նրան կամ հրաժարվում նրանից, պետությունը պատասխանատու է երեխայի իրավունքները պաշտպանելու և համապատասխան այլընտրանքային խնամք ապահովելու գործում՝ տեղական իշխանությունների և գրանցված հասարակական կազմակերպությունների հետ կամ նրանց միջոցով: Պետության դերը իր իշխանությունների միջոցով այլընտրանքային խնամքի հանձնված ցանկացած երեխայի ապահովությունը, բարեկեցությունը, զարգացման պահպանումը և համապատասխան խնամքի իրականացման պարբերական վերանայումը երաշխավորելն է:

6. Բոլոր որոշումները, նախաձեռնությունները և մոտեցումները, որոնք զետեղված են այս Ուղեցույցի շրջանակներում, պետք է հիմնված լինեն առանձին դեպքերի վրա, հատկապես երեխայի անվտանգությունն ու ապահովությունը երաշխավորելու մտադրությամբ: Դրանք պետք է հիմնվեն երեխայի շահերի և իրավունքների վրա՝ անխտ-

ռականության և գենդերային սկզբունքի համաձայն, պետք է հարգեն երեխայի իրավունքները և նրա կարծիքը, հաշվի առնեն նրա զարգացման առանձնահատկությունները և հիմնվեն երեխային անհրաժեշտ տեղեկույթի հասանելիության վրա: Ամեն ջանք պետք է գործադրվի՝ երեխայի նախընտրած լեզվով խորհրդատվություն և տեղեկատվություն տրամադրելու համար:

7. Սույն Ուղեցույցը կիրառելիս՝ նախ պետք է սահմանվի տվյալ երեխայի լավագույն շահը ծնողական խնամքից զրկված կամ նման վտանգի տակ գտնվող երեխաների համար գործողություն իրականացնելիս, որպեսզի գործողությունները լինեն լավագույնս հարմարեցված նրանց կարիքներն ու իրավունքները բավարարելուն, հաշվի առնվի նրանց լիարժեք ու անձնական զարգացման իրավունքը ընտանիքում, սոցիալական ու մշակութային միջավայրում ու նրանց կարգավիճակը որպես իրավունքի սուբյեկտներ թե՛ որոշման կայացման պահին, թե՛ երկարաժամկետ կտրվածքով: Այս որոշումն իրականացնելու ընթացքում պետք է հաշվի առնվեն երեխայի իրավունքների ապահովման հնարավորությունները, երեխայի տեսակետը՝ տարիքին ու հասունությանը համապատասխան:

8. Պետությունները իրենց ընդհանուր սոցիալական և մարդկային զարգացման քաղաքականության շրջանակներում պետք է զարգացնեն և իրականացնեն երեխայի բազմակողմանի բարեկեցության և ապահովության ռազմավարությունը, ուշադրությունը բևեռեն արդեն գոյություն ունեցող այլընտրանքային խնամքի դրույթների բարելավմանը՝ հավատարիմ մնալով սույն Ուղեցույցի սկզբունքներին:

9. Որպեսզի կանխվի երեխաների բաժանումն իրենց ընտանիքներից, պետությունը պետք է ձգտի ապահովել համապատասխան և մշակութային առումով զգայուն չափորոշիչներ.

ա) Աջակցել ընտանեկան խնամքի միջավայրին, որի հնարավորությունները սահմանափակված են տարբեր գործոններով, ինչպիսիք են հաշմանդամությունը, ալկոհոլի կամ թմրադեղերի չարաշահումը, բնիկ կամ փոքրամասնություն կազմող ընտանիքների խտրականությունը և զինված հակամարտության տարածաշրջանում կամ օտար տիրապետության տակ ապրելը:

բ) Ապահովել համապատասխան խնամք և պաշտպանություն խոցելի երեխաների համար, ինչպիսիք են բռնության և չարաշահման ենթարկված երեխաները, լքված երեխաները, փողոցում ապրող, արտամուսնական հարաբերություններից ծնված, առանց ուղեկցողի և ընտանիքից առանձնացված, արտագաղթած և փախստական, ներգաղթած աշխատողների, ապաստան փնտրողների երեխաները, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով և այլ լուրջ հիվանդություններով վարակված կամ նման մարդկանց հետ ապրող երեխաները:

10. Հատուկ ջանքեր պետք է գործադրվեն՝ վերացնելու խտրականությունը, որը հիմնված է երեխայի կամ ծնողի կարգավիճակի վրա, ներառյալ աղքատությունը, էթնիկ խտրականությունը, կրոնը, սեռը, հոգեկան և ֆիզիկական սահմանափակումները, ՄԻԱՎ/ՁԻԱՀ կամ այլ ֆիզիկական կամ հոգեկան լուրջ հիվանդությունները, արտամուսնական ծնունդը, սոցիալ-տնտեսական դրդապատճառները և բոլոր այն կարգավիճակներն ու հանգամանքները, որոնք կարող են ստիպել հրաժարվել երեխայից, լքել նրան կամ ազատվել նրանից:

Բ. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔ

11. Այլընտրանքային խնամքի բոլոր որոշումները պետք է ամբողջապես հաշվի առնեն երեխայի՝ իր մշտական բնակության վայրին որքան հնարավոր է մոտ ապրելու սկզբունքի ցանկալի լինելը, որպեսզի դյուրացնեն իր ընտանիքի հետ կապն ու հնարավոր վերամիավորումը և նվազագույնի հասցնեն հեռացումը իր կրթական, մշակութային ու սոցիալական կյանքից:

12. Այլընտրանքային խնամքի տակ գտնվող երեխաների, ներառյալ ոչ ֆորմալ խնամքի ներքո գտնվողների մասին որոշումները պետք է պատշաճ կերպով հաշվի առնեն երեխաների կայուն բնակության և իրենց խնամակալների հետ ապահով ու շարունակական կապվածություն պահպանելու հիմնական պահանջմունքի բավարարման կարևորությունը. այն պետք է լինի առաջնային նպատակ:

13. Երեխաներին մշտապես պետք է վերաբերվել արժանապատվության զգացումով և հարգանքով. նրանք արդյունավետ պաշտպանություն պետք է ստանան շահագործումից, արհամարհանքից և բոլոր տեսակի բռնություններից ինչպես խնամք իրականացնողների, այնպես էլ հասակակիցների և այլ մարդկանց կողմից:

14. Երեխային իր ընտանիքի խնամքից տեղափոխելը պետք է դիտվի որպես ծայրահեղ միջոց, և այն պետք է լինի որքան հնարավոր է ժամանակավոր կամ կարճաժամկետ: Տեղափոխման որոշումները պետք է մշտապես վերանայվեն, և երեխայի վերադարձը ծնողական խնամքին անմիջապես բխի երեխայի լավագույն շահերից, երբ որ երեխայի տեղափոխման հիմնական պատճառները հարթված լինեն կամ վերացված: Գնահատման գործընթացի մասին տե՛ս 49-րդ պարագրաֆում:

15. Ֆինանսական կամ նյութական աղքատությունը կամ նման աղքատությունն ուղղակիորեն բնորոշող պայմանները երբեք չպետք է լինեն երեխային ծնողական խնամքից այլընտրանքային խնամքի տեղափոխելու կամ վերամիավորումը արգելելու միակ արդարացումը, այլ պետք է դիտվեն որպես ընտանիքին համապատասխան աջակցություն տրամադրելու կարիքի ազդանշան:

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Այս սկզբունքը պարզ կանխարգելիչ դեր ունի պետական ռազմավարության և ռեսուրսների կարիքների համար, որպեսզի ապահովվեն սոցիալական աշխատանքի այն ծառայությունները, որոնք ձգտում են կանխելու երեխայի բաժանումը ընտանիքից:

ԱՐԴՅՈ՞Ք ՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

…հստակորեն հաստատում է, որ երեխայի հեռացումը ընտանիքից պետք է կատարվի ծայրահեղ անհրաժեշտության դեպքում.

…նշում է, որ միայն աղքատությունը երբեք առաջնային պատճառ չի կարող համարվել երեխային ընտանիքից բաժանելու և այլընտրանքային խնամքի հանձնելու համար.

…ապահովում է, որ բազմակողմանի չափանիշներ օգտագործվեն ընտանիքի՝ երեխային խնամելու ընդունակությունը գնահատելու համար այն դեպքում, երբ ընտանիքում երեխայի հանդեպ վտանգը բացահայտված է.

…նպաստում է ընտանիքի համապատասխան աջակից ծառայությունների զարգացմանը և իրականացմանը՝ որպես կանխարգելում, որպեսզի երեխաների խնամքն ապահովեն իրենց ընտանիքները.

…երաշխավորում է, որ ծնողները և երեխաները լիիրավ մասնակցություն ունենան որոշումներ կայացնելու գործընթացին և ծանոթ լինեն իրենց իրավունքներին, մասնավորապես երեխայի՝ ընտանիքից բաժանելու որոշմանը հակասող իրավունքին.

….ապահովում է դաստիարակչական կրթություն և նմանատիպ այլ աջակցություն, օրինակ՝ երիտասարդ ծնողների համար, որպեսզի կանխվի երեխային լքելը.

…երաշխավորում է, որ երեխային այլընտրանքային խնամքի հանձնելը պարբերաբար ստուգվի, և դրա միջոցով գնահատվեն ընտանիքից դուրս տեղավորելու անհրաժեշտության շարունակականությունը և ընտանիք վերադառնալու հավանականությունը:

16. Ուշադրություն պետք է դարձվի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավիճակին յուրահատուկ բոլոր իրավունքների պաշտպանությանն ու առաջ մղմանը, այդ թվում կրթության, առողջապահության ու այլ հիմնարար ծառայությունների հասանելիության, ինքնության, կրոնի կամ հավատքի, լեզվի ազատության, սեփականության և ժառանգության իրավունքների պաշտպանությանը:

17. Քույրերի և եղբայրների միջև կապերն սկզբունքորեն չպետք է խզվեն այլընտրանքային խնամքի որոշման հետևանքով, բացառությամբ այն դեպքերի, երբ կա չարաշահման հստակ ռիսկ կամ այլ արդարացում՝ երեխայի լավագույն շահերից ելնելով: Ամեն ջանք պետք է գործադրվի՝ հնարավորություն ընձեռելու եղբայրներին և քույրերին՝ կապ պահպանելու միմյանց հետ, եթե դա չի հակասում նրանց ցանկություններին ու շահերին:

18. Գիտակցելով այս՝ շատ երկրներում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մեծ մասը ոչ ֆորմալ կերպով խնամվում է բարեկամների կամ այլոց կողմից: Պետությունները պետք է ձգտեն միջոցներ հատկացնել՝ այս Ուղեցույցին համապատասխան ապահովելու նրանց բարեկեցությունը և պաշտպանությունը: Ոչ ֆորմալ խնամքի կազմակերպման գործընթացում մշակութային, տնտեսական, սեռական և կրոնական տարբերությունների և երեխայի իրավունքներին և լավագույն շահերին չհակասող գործունեության հանդեպ պատշաճ հարգանքի պահանջ է զգացվում:

19. Ոչ մի երեխա երբևէ չպետք է մնա առանց օրինական խնամողի կամ առանց մեկ այլ մեծահասակի կամ իրավասու պետական մարմնի աջակցության ու խնամքի:

20. Այլընտրանքային խնամքի կազմակերպման առաջնային նպատակը երբևէ չպետք է ունենա քաղաքական, կրոնական կամ տնտեսական շահ:

21. Շուրջօրյա հաստատությունում խնամքի կազմակերպումը պետք է սահմանափակված լինի այն դեպքերով, երբ այն հատկապես անհրաժեշտ է, կառուցողական է և համապատասխանում է տվյալ երեխայի լավագույն շահերին:

22. Փորձագետների գերակշռող կարծիքի համաձայն՝ փոքր երեխաների, հատկապես մինչև երեք տարեկանների համար այլընտրանքային խնամքը պետք է ապահովվի ընտանիքահեն շրջանակներում: Այս սկզբունքի բացառություն են կազմում դեպքերը, երբ անհրաժեշտ է կանխել եղբայրների ու քույրերի բաժանումը, և այն դեպքերում, երբ տեղավորումն ունի ծայրահեղ բնույթ կամ կատարվում է սահմանված որոշակի ժամկետով՝ նախատեսելով ընտանիքի վերամիավորում կամ համապատասխան երկարաժամկետ խնամքի որոշում:

23. Ընդունելով, որ երեխաների կարիքների բավարարման հարցում խնամքի շուրջօրյա հաստատությունները և ընտանեկան տիպի խնամքը համալրում են միմյանց, այնտեղ, որտեղ դեռ պահպանվում են մեծ շուրջօրյա հաստատություններ (ինստիտուտներ), հստակ նպատակներով և ձգտումներով ապաինստիտուցիոնալացման ռազմավարության ընդհանուր համատեքստում պետք է մշակվեն խնամքի այլընտրանքային ձևեր, որոնք կհանգեցնեն մեծ հաստատությունների կրճատմանը: Այս նպատակով պետությունները պետք է ընդունեն խնամքի ստանդարտներ՝ երեխայի զարգացումն ապահովող որակը և պայմանները երաշխավորելու նպատակով, ինչպիսին է անհատականացված և փոքր խմբերով խնամքը: Գնահատումը պետք է իրականացնեն գործող հաստատություններում այս ստանդարտներին համապատասխան: Թե՛ պետական և թե՛ մասնավոր նոր խնամքի շուրջօրյա հաստատությունների հիմնադրման կամ դրանց հիմնադրման թույլտվության ընթացքում պետք է լիովին հաշվի առնվեն ապաինստիտուցիոնալացման խնդիրներն ու ռազմավարությունը:

Կիրառումը խթանելու միջոցները

24. Պետությունները պետք է առավելագույն չափով և համապատասխան ձևով զարգացող համագործակցության շրջանակներում հատկացնեն իրենց հասանելի մարդկային և ֆինանսական ռեսուրսները՝ ապահովելու համար սույն Ուղեցույցի հնարավոր և արագընթաց կիրառումը իրենց համապատասխան տարածքներում և ժամանակամիջոցում: Պետությունները պետք է խթանեն բոլոր շահագրգիռ կառույցների, ուղղակի կամ անուղղակի առնչություն ունեցող բոլոր նախարարությունների ակտիվ համագործակցությունը՝ երեխայի ու նրա ընտանիքի բարեկեցության հարցերի բարելավման նպատակով:

25. Պետությունները պատասխանատու են բացահայտելու ցանկացած կարիք և հայցելու միջազգային համագործակցություն սույն Ուղեցույցը կիրառելու դեպքում: Այդ հայցերը պետք է պատշաճ քննարկվեն և ստանան որքան հնարավոր է բարենպաստ պատասխան: Ուղեցույցների ուժեղացված իրագործումը պետք է կառուցվի զարգացվող համագործակցության ծրագրերում: Պետությանն աջակցություն տրամադրելիս՝ օտարերկրյա կառույցները պետք է ձեռնպահ մնան սույն Ուղեցույցի հետ անհամատեղելի որևէ նախաձեռնությունում ներգրավվելուց:

26. Սույն Ուղեցույցները չպետք է ընկալվեն որպես տվյալ պետություններում գործող ստանդարտներից ու օրենսդրությունից ավելի ցածր ստանդարտների ընդունման կոչ: Իրավազոր հեղինակությունները, մասնագիտական կազմակերպությունները և այլք խրախուսվում են՝ զարգացնելու ազգային և մասնագիտական Ուղեցույցներ, որոնք հիմնված կլինեն սույն Ուղեցույցի բովանդակության և ոգու վրա:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Այն դեպքում, երբ երեխայի շահերից ելնելով՝ այլընտրանքային խնամքը համարվում է անհրաժեշտ, Ուղեցույցը ձգտում է ապահովելու խնամքի տեսակի այնպիսի ընտրություն, որը յուրաքանչյուր դեպքի համար ժամանակի, ծախսի առումով կնպաստի կայունությանը և կլինի մշտական:

© D. Sansoni

ԱՐԴՅՈ՞Ք ՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

... ապահովում է առկա այլընտրանքային խնամքի տեսակների ընտրություն՝ հիմնվելով երեխայի նկատմամբ հոգածության և նրա պաշտպանության անհատական կարիքների վրա,

... ներառում է հստակ բեռնաթափման (ապաինստիտուցիոնալացման) Ազգային ծրագիր՝ խնամքի համակարգի և ընտանիքահեն խնամքի կամ այլընտրանքային խնամքի այլ տեսակների զարգացման համար,

... պարտավորեցնում է խնամք իրականացնողներին՝ ապահովելու համապատասխան հիմնավոր ստուգումներ, ճշտելու հնարավոր խնամողների համապատասխանությունը,

... ներառում է այլընտրանքային խնամքի դեպքում եղբայրների և քույրերի՝ միասին գտնվելու անհրաժեշտությունը՝ որպես գնահատման հիմնական պահանջ,

... պարտավորեցնում է խնամք իրականացնողներին և աշխատողներին՝ ապահովելու երեխայի և ընտանիքի լիարժեք մասնակցությունը պլանավորման, վերանայման և որոշում կայացնելու գործընթացին՝ այլընտրանքային խնամքի տեսակի կազմակերպման համար,

... ստեղծում է իրավական հիմք, որը կրում է երեխայի իրավունքների ապահովման ընդհանրական մոտեցում՝ հաշվի առնելով ոչ միայն խնամքը և պաշտպանությունը, այլ նաև կրթությունը, առողջությունը, ինքնությունը, հավատը կամ գաղտնիությունը:

III. ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

27. Տվյալ Ուղեցույցները կիրառվում են այլընտրանքային ֆորմալ խնամքի տարբերակում մինչև 18 տարեկան բոլոր անձանց նկատմամբ, եթե, իհարկե, երեխան, օրենքի համապատասխան, ավելի շուտ չի դարձել չափահաս: Միայն կոնկրետ նշված դեպքերում է, որ Ուղեցույցը վերաբերում է ոչ ֆորմալ խնամքին՝ հաշվի առնելով թե՛ ընդլայնված ընտանիքների ու համայնքի դերը և թե՛ առանց ծնողական, օրինական կամ ոչ օրինական խնամատարի խնամքի մնացած բոլոր երեխաների նկատմամբ պետության պարտավորությունները, որոնք ամրագրված են Երեխայի իրավունքների կոնվենցիայում:

28. Տվյալ Ուղեցույցների սկզբունքները, ըստ անհրաժեշտության, կիրառելի են նաև այն երիտասարդ անձանց նկատմամբ, ովքեր արդեն գտնվում են այլընտրանքային խնամքի ներքո, և ովքեր անցումային շրջանում շարունակական խնամքի կարիք ունեն կամ չափահասության տարիքին հասնելուց հետո կարիք ունեն շարունակական աջակցության:

29. Հետևյալ սահմանումները կկիրառվեն տվյալ Ուղեցույցի նպատակների, առարկաների, հատկապես 30-րդ պարբերությունում նշված բացառությունների համար:

ա) Ծնողական խնամքից զուրկ երեխաներ. բոլոր երեխաները, ովքեր չեն ստանում առնվազն մեկ ծնողի կողմից շուրջօրյա խնամք՝ անկախ հանգամանքներից և պատճառներից: Ծնողական խնամքից զուրկ երեխաները, ովքեր իրենց բնակավայրից հեռու են կամ արտակարգ իրավիճակների զոհ են դարձել, կարող են ներկայացվել հետևյալ կերպ.
   1. «Առանց չափահասի ուղեկցության», եթե չեն խնամվում այլ բարեկամների կամ այն մարդկանց կողմից, ովքեր օրենքով կարող են խնամել տվյալ երեխաներին,
   2. «Առանձնացված», եթե առանձնացված են իրենց նախորդ օրինական կամ ժամանակավոր խնամակալից, բայց, այնուամենայնիվ, կարող են ուղեկցվել այլ ազգականի կողմից:

բ) Այլընտրանքային խնամքը կարող է ունենալ հետևյալ ձևերը.
   1. Ոչ ֆորմալ խնամք — ցանկացած մասնավոր հարմարեցում, որը տրամադրվում է ընտանեկան միջավայրում, որտեղ երեխան իր, իր ծնողների կամ այլ անձանց ցանկությամբ և առաջարկով շարունակական կամ անորոշ ժամանակով խնամվում է ազգականների, ընկերների (ոչ ֆորմալ ազգական խնամք) կամ ուրիշների կողմից, եթե այդ խնամքի կազմակերպումը չի պատվիրակվել վարչական, դատական կամ հավատարմագրված մարմինների կողմից:
   2. Ֆորմալ խնամք — ընտանեկան միջավայրում տրամադրվող ամբողջ խնամքը, որ պատվիրակվել է իրավասու վարչական մարմնի կամ դատական իշխանության կողմից, և շուրջօրյա խնամքի հաստատությունում (ներառյալ մասնավոր) տրամադրվող ամբողջ խնամքն անկախ դրա վարչական կամ դատական միջամտության արդյունք լինել-չլինելուց:

գ) Ըստ այլընտրանքային խնամք տրամադրելու միջավայրի՝ տարբերակվում են.
   1. Ազգակցական խնամք — ընտանիքը տրամադրում է խնամք՝ երեխայի ընդլայնված ընտանիքի ներսում, կամ խնամքը հանձնվում է ընտանիքի մտերիմներին անկախ խնամքի ֆորմալ կամ ոչ ֆորմալ լինելուց:
   2. Խնամատար ընտանիք — իրավիճակներ, երբ երեխաներն այլընտրանքային խնամքի նպատակով իրավասու մարմինների կողմից տեղավորվում են որևէ ընտանիք, որն ապահովում է ընտանեկան միջավայր՝ չհանդիսանալով երեխայի հարազատ ընտանիքը, և որը նմանատիպ խնամք տրամադրելու նպատակով ընտրվել է, որակավորվել, հաստատվել ու ենթակա է վերահսկողության:
   3. Ընտանիքի վրա հիմնված կամ ընտանիքի օրինակով խնամքի տեղավորում:
   4. Խնամք հաստատություններում — խնամք, որը տրամադրվում է ցանկացած ոչ ընտանիքահեն խմբում, օրինակ՝ ապաստարաններում՝ հրատապ խնամքի անհրաժեշտության դեպքում, անցումային կենտրոններում՝ արտակարգ իրավիճակների ժամանակ, և խնամքի՝ կարճաժամկետ ու երկարաժամկետ բնակության մնացած բոլոր հաստատություններում՝ ներառյալ խմբակային տները.
   5. Երեխաների անկախ բնակության հնարավորություններ, որոնք վերահսկվում են:

դ) Ըստ այլընտրանքային խնամքի պատասխանատուների.
   1. Գործակալությունները մասնավոր կամ պետական մարմիններ և ծառայություններ են, որոնք երեխաների համար կազմակերպում են այլընտրանքային խնամք:
   2. Կառույցները պետական կամ մասնավոր հաստատություններ են, որոնք երեխաներին տրամադրում են խնամք հաստատության ներքո:

30. Այլընտրանքային խնամքի շրջանակը, ինչպես նշված է ներկա Ուղեցույցում, այնուամենայնիվ չի տարածվում.

ա) Մինչև տասնութ տարեկան անձանց վրա, ովքեր ազատազրկված են դատական կամ վարչական իշխանության որոշմամբ որպես օրենքը խախտելու մեջ կասկածյալ, մեղադրյալ կամ ում հանդեպ հա-

մապատասխան վճիռն արդեն կայացվել է, և ում իրավիճակն ընգրկված է Միավորված ազգերի կազմակերպության՝ ազատազրկված անչափահասների պաշտպանության կանոններում, Միավորված ազգերի կազմակերպության՝ անչափահասների արդարադատության վարչության ստանդարտ նվազագույն կանոններում:

բ) Այն դեպքերում, երբ երեխան, համաձայն որդեգրման վերջնական որոշման, հանձնվում է որդեգրող ծնողների խնամքին. այս դեպքում երեխան համարվում է ծնողական խնամքի ներքո գտնվող: Այնուամենայնիվ, Ուղեցույցը կիրառելի է որդեգրմանը նախորդող շրջանում և որդեգրման փորձաշրջանում՝ միջազգային այլ համապատասխան չափանիշների համաձայն:

գ) Ոչ ֆորմալ պայմանավորվածության դեպքում, երբ երեխան խնամքի նպատակով կամավոր մնում է բարեկամների կամ ընկերների մոտ ոչ այն պատճառով, որ ընտանիքը պատասխանատու չէ կամ ի վիճակի չէ իրականացնելու խնամքը:

31. Իրավասու մարմինները և մյուս շահագրգռված մարմինները նույնպես խրախուսում են տվյալ Ուղեցույցի կիրառումը գիշերօթիկ դպրոցներում, հիվանդանոցներում, մտավոր և ֆիզիկական հաշմանդամություն կամ այլ հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար նախատեսված հաստատություններում, ճամբարներում, աշխատավայրում և վայրերում, որոնք պատասխանատու են երեխայի խնամքի համար:

IV. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Ա. ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԽԹԱՆՈՒՄ

32. Պետությունները պետք է հետամուտ լինեն այնպիսի քաղաքականության, որն ապահովում է աջակցություն ընտանիքներին, որպեսզի նրանք կարողանան ի կատար ածել իրենց պարտավորությունները երեխայի հանդեպ, ու նպաստում է, որ երեխաները կապ ունենան իրենց երկու ծնողների հետ էլ: Այս քաղաքականությունը պետք է պայքարի երեխայի լքվածության, երեխայից հրաժարվելու, երեխայի՝ իր ընտանիքից հեռացման պատճառների դեմ: Պետությունները պետք է ապահովեն, որ երեխան ունենա ծննդյան վկայական, համապատասխան բնակարանը հասանելի լինի: Պետք է հետևեն երեխայի տարրական առողջական վիճակին, նպաստեն, որ երեխան կրթություն ստանա և օգտվի սոցիալական բարեկեցության ծառայություններից, ինչպես նաև նպաստեն աղքատության, մարգինալացման, խոցելիության, խարանի ու

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԽԹԱՆՈՒՄ

Ընդգծելով սոցիալական աշխատանքի կանխալգելիչ դերը՝ Ուղեցույցը ներկայացնում է խոցելի ընտանիքներին աջակցելու և ուժ տալու կարիքը՝ երեխաներին ինքնուրույն խնամելու համար:

ԱՐԴՅՈ՞Ք ՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝

... ապահովում է ընտանիքների խոցելիության պատճառահետևանքային գործոնների վերաբերյալ համապատասխան տվյալների հավաքումը, դրանց փոխանցումը ծառայություններին և աջակցության ցուցաբերումը ընտանիքներին,

... նախատեսում է համապատասխան միջամտություններ ընտանիքին աջակցելու և բաժանումը կանխելու համար: Ապահովում է, որ այդ միջամտությունները լինեն արդյունավետ, նպատակային և իրականացվող,

... երաշխավորում է, որ ընտանեկան ուղղվածության քաղաքականությունը կգործի և կիրականացնի ընտանեկան միջավայրի ուժեղացում՝ առանց խտրականությունների վրա հիմնվելու, օրինակ՝ ամուսնական, էթնիկական, ծննդյան կարգավիճակ, աղքատություն և այլն,

... ճանաչում է մայրերի և հայրերի ընդհանուր պատասխանատվությունը և նպաստում է, որ երեխայի խնամքի միջավայր ապահովելու համար նրանք հավասարապես համապատասխան վերաբերմունք դրսևորեն, ուժեղացվեն նրանց հմտությունները, կարողությունները,

... նպաստում է համաձայնեցված ծառայության մատուցման պայմաններին և համապատասխան ծառայությունների ընդլայնմանը, որպեսզի ընտանիքի առջև խնդիրներ ծագելու դեպքում ապահովվեն հարմարեցված և համապատասխան միջոցներ:

խտրականության վերացմանը, երեխայի հանդեպ բռնության և սեռական շահագործման կանխմանը:

33. Ընտանիքի ամրացման ուղղությամբ պետությունները պետք է զարգացնեն և հետևողական ու փոխադարձ աջակցող ընտանեակենտրոն քաղաքականություններ, որոնք պետք է նպաստեն ու զարգացնեն ծնողների՝ իրենց երեխաներին խնամելու կարողությունները:

34. Պետությունները պետք է իրականացնեն արդյունավետ միջոցներ, որպեսզի կանխեն երեխայի լքումը, տեղափոխումը կամ հրաժարումը ընտանիքից: Սոցիալական քաղաքականությունը և սոցիալական ծրագրերը պետք է նաև արտոնություններ տրամադրեն ընտանիքներին վերաբերմունքի, հմտությունների, կարողությունների զարգացման նպատակով: Դա նրանց հնարավորություն կտա պատշաճ կերպով ապահովելու երեխայի պաշտպանությունը, զարգացումը և խնամքը: Պետությունները և քաղաքացիական հասարակության հավելյալ կարողությունները՝ ներառյալ ոչ պետական և համայնքային կազմակերպությունները, կրոնական առաջնորդները և մամուլը, պետք է մասնակից լինեն այդ գործընթացին: Սոցիալական պաշտպանության այս միջոցառումները պետք է ներառեն.

ա) Ընտանիքի ամրապնդման ծառայություններ, ինչպես օրինակ՝ ծնողավարման դասընթացներ, ծնող-երեխա դրական կապի նպաստում, կոնֆլիկտների հաղթահարման ունակություններ, աշխատանքի ու եկամտի հնարավորություններ և կարիքի դեպքում՝ սոցիալական աջակցություն:

բ) Աջակցող սոցիալական ծառայություններ, որոնցից են, օրինակ, առօրյա խնամքը, միջնորդության և համաձայնեցման գործողությունների ծառայությունները, ֆինանսական աջակցությունը ընտանիքին ու սահմանափակ կարողություններով երեխաների համար նախատեսված ծառայությունները. այսպիսի ծառայություններից նախընտրելի են ինտեգրված և ոչ ինտեգրված բնույթի ծառայությունները, որոնք համայնքային մակարդակում պետք է լինեն ուղղակիորեն մատչելի և ակտիվ՝ ներգրավելով ծնողներին՝ որպես գործընկերների՝ նրանց ռեսուրսները համապատասխանեցնելով համայնքի ու խնամողի ռեսուրսներին:

գ) Երիտասարդական քաղաքականությունը նպատակ ունի ուժեղացնելու երիտասարդների՝ առօրյա կյանքի դժվարությունները հաղթահարելու կարողությունները՝ ներառյալ այն դեպքերը, երբ նրանք որոշում են թողնել ծնողական տունը, ինչպես նաև իրազեկելու ապագա ծնողներին՝ իրենց սեռական և վերարտադրողական կյանքի վերաբերյալ որոշումներ կայացնելիս զգոն լինել, բարձր պատասխանատվություն դրսևորել այդ հարցերում:

35. Լրացուցիչ տարբեր մեթոդներ և տեխնոլոգիաներ պետք է օգտագործվեն ընտանիքի աջակցության համար, որոնք պետք է աջակցության գործընթացների տարբեր փուլերում ըստ կարիքի փոփոխվեն տնայցերի, այլ ընտանիքների հետ խմբային հանդիպումների, դեպքերի քննարկումների և ընտանիքի կողմից տրված խոստումների իրագործման ապահովման: Դրանք պետք է ուղղված լինեն ընտանեկան հարաբերությունների հաշտեցմանը և նպաստեն ընտանիքի՝ համայնքին ինտեգրվելուն:

36. Տեղական օրենքի համաձայն՝ հատուկ ուշադրություն պետք է դարձնել միայնակ ու երիտասարդ ծնողների և նրանց երեխաների խնամքի նախապատրաստմանն ու իրականացմանը, անկախ նրանից՝ ամուսնացած են, թե ոչ: Պետությունները պետք է երաշխավորեն, որ երիտասարդ ծնողների իրավունքները պաշտպանված լինեն, և հատուկ ուշադրություն դարձնեն նրանց կարգավիճակին. և՛ ծնողների, և՛ երեխաների մուտքը մատչելի պետք է լինի համապատասխան բոլոր ծառայություններում՝ իրենց իսկ զարգացման համար, օրինակ՝ նպաստներ, ժառանգություն ստանալ, ինչի իրավունքը նրանք ունեն: Պետք է միջոցներ ձեռնարկել դեռահաս հղիների պաշտպանության համար և ապահովել, որ նրանք ուսումը չընդհատեն: Պետք է ջանքեր գործադրվեն միայնակ և դեռահաս ծնողների հանդեպ խարանը նվազեցնելու համար:

37. Աջակցությունը և ծառայությունները պետք է հասանելի լինեն այն եղբայրներին և քույրերին, ովքեր կորցրել են իրենց ծնողներին կամ խնամակալներին և ընտրել են իրենց ընտանիքում միասին մնալու տարբերակը այն

դեպքում, երբ ավագ քույրը կամ եղբայրն ի վիճակի է կազմակերպելու կենցաղը: Պետությունները պետք է ապահովեն, որ նշանակվի օրինական խնամակալ, լինի մեծերի պատասխանատվություն կամ, անհրաժեշտության դեպքում, համաձայն օրենքի, հանրային մարմինը հանդես գա որպես խնամակալ: Ինչպես նշված է 19-րդ գլխում, նմանատիպ ընտանիքը ստանում է պարտադիր պաշտպանություն բոլոր տիպի շահագործումներից և բռնություններից, ինչպես նաև հսկողություն և աջակցություն՝ տեղական համայնքի որևէ հատվածում գտնվող իրավական ծառայություններից. օրինակ՝ սոցիալական աշխատողները որոշակի առումով անդրադարձ են կատարում երեխաների առողջական վիճակին, նրանց բնակավայրին, կրթության և ժառանգության իրավունքներին: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ապահովելու, որ նմանատիպ ընտանիքի ղեկավարի գործառույթն ստանձնած անձը պահպանի երեխայի իր կարգավիճակին հարիր բոլոր իրավունքները՝ ներառյալ կրթության ու ազատ ժամանցի իրավունքը՝ ի հավելումն որպես ընտանիքի ղեկավար իր իրավունքների:

38. Պետությունները պետք է ապահովեն ցերեկային խնամքի պայմանները՝ ներառյալ դպրոցական երկարօրյա և ժամանակավոր խնամքի պայմանները: Դա հնարավորություն կընձեռի ծնողներին կատարելու իրենց պարտականություններն ընտանիքի և երեխայի նկատմամբ՝ ներառյալ հատուկ խնամքի կարիք ունեցող երեխայի նկատմամբ պատասխանատվությունը:

Ընտանիքի բաժանման կանխարգելում

39. Հիմնվելով մասնագիտական սկզբունքների վրա՝ պետք է մշակվեն ճշգրիտ չափանիշներ ու հետևողականորեն կիրառվեն երեխայի և ընտանիքի կարգավիճակի գնահատման ընթացքում՝ ներգրավելով նաև ընտանիքի իրական ու հնարավոր կարողությունները, երեխայի խնամքի հարցերը հատկապես այն դեպքերում, երբ իրավասու մարմինները կամ բաժիններն ունեն հիմքեր մտածելու, թե երեխայի բարեկեցությունը վտանգված է:

40. Հեռացման կամ վերամիավորման որոշումները պետք է հիմնված լինեն գնահատման արդյունքների վրա և կատարվեն համապատասխան որակավորում ունեցող և վերապատրաստված մասնագետների, իրավասու մարմնի լիազորած ներկայացուցչի կողմից, որոնք կիրականացնեն շահագրգիռ կողմերի լիարժեք խորհրդատվություն՝ հաշվի առնելով երեխայի կարիքները ապագայի ծրագրման ժամանակ:

41. Պետությունները խրախուսում են հղիության, ծննդաբերության և կրծքով կերակրելու ընթացքում իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումները, որպեսզի անհրաժեշտ պայմաններ ապահովեն ողջ

ԸՆՏԱՆԻՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Ընտանքի բաժանման կանխարգելումը, կարևորության սկզբունքից ելնելով, կենտրոնանում է որոշում կայացնելու ճշգրիտ և արդյունավետ գործընթացների վրա:

© C. Lesske

ԱՐԴՅՈ՞Ք ՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

... ապահովում է գնահատման ընթացքի և բազմամասնագիտական հնարավորությունների համապատասխանությունը, օրինակ՝ կրթության, առողջապահության և համապատասխան այլ ոլորտներում,

... պահանջում է գնահատման գործընթացներում հնարավոր քննարկումների միջոցով բացահայտել ընտանիքին անհրաժեշտ աջակցությունները և կատարել փոխանցում համապատասխան ծառայություններին՝ որպես այլընտրանքային որոշում,

... երաշխավորում է գնահատման գործընթացներում բացահայտել և կանխել երեխաների ոչ անհրաժեշտ բաժանման պատճառները, ինչպիսիք են խտրականությունը, աղքատությունը կամ հաշմանդամությունը,

... խրախուսում է մասնագիտական խմբերի ուսուցումը, աջակցում ուսուցիչներին, բժիշկներին՝ նպատակ ունենալով հայտնաբերելու ռիսկային խմբի երեխաներին և կատարելու ուղղորդումներ համապատասխան ծառայություններին և իշխանության ներկայացուցիչներին,

... ապահովում է խոցելի խմբի ծնողներին, որոնք փորձում են հրաժարվել իրենց երեխաներից, խորհրդատվությամբ, նյութական աջակցությամբ, որպեսզի իրականացնեն երեխաների խնամքը և չլքեն նրանց,

... նպաստում է ընթացակարգերի կիրառմանը, որոնք կօգնեն լքված երեխաներին՝ համապատասխան և անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ:

հղիության և երեխայի խնամքի ընթացքում: Այսպիսով, աջակցող ծրագրերը պետք է աջակցեն ապագա մայրերին և հայրերին, մասնավորապես դեռահաս ծնողներին, ովքեր ծնողական պարտականություններն իրականացնելու հարցում դժվարություններ ունեն: Նմանատիպ ծրագրերը նպատակ ունեն զարգացնելու մայրերի և հայրերի կարողությունները, որպեսզի նրանք կատարեն իրենց ծնողական պարտականությունները համապատասխան պայմաններում և խուսափեն իրենց խոցելիության պատճառով երեխայից հրաժարվելուց:

42. Եթե երեխայից հրաժարվել կամ լքել են նրան, պետությունները պետք է երեխայի համար ապահովեն գաղտնի և անվտանգ պայմաններ, հարգեն նրա իրավունքները՝ տրամադրելով տեղեկատվություն իր ծագման մասին՝ համաձայն պետության օրենսդրության:

43. Պետությունները պետք է մշակեն հստակ քաղաքականություն անանուն լքված երեխայի վիճակին արձագանքելու հարցում, որը նախատեսում է ընդլայնված ընտանիքի հայտնաբերման, միավորման կամ տեղափոխման ընթացակարգ: Քաղաքականության մեջ պետք է նախատեսված լինի նաև հրատապ որոշում կայացնելու ընթացակարգ՝ երեխային ընտանիքում տեղավորելու համար:

44. Երբ ծնողը կամ օրինական խնամակալը դիմում է հանրային, մասնավոր գործակալություններ կամ հաստատություններ՝ ցանկություն հայտնելով հրաժարվել երեխայից, ապա պետությունը պետք է ապահովի խորհրդատվությամբ և սոցիալական աջակցությամբ՝ հորդորելով շարունակել երեխայի խնամքը: Եթե դա չի հաջողվում, սոցիալական աշխատողը կամ համապատասխան մասնագետն իրականացնում է գնահատում՝ պարզելու ընտանիքի մյուս անդամների պատրաստակամությունը՝ ապահովելու երեխայի խնամքը, և արդյոք դա բխում է երեխայի լավագույն շահերից: Եթե նման լուծումը հնարավոր չէ կամ չի բխում երեխայի լավագույն շահերից, ջանքեր պետք է գործադրվեն խելամիտ ժամկետում գտնելու մշտական ընտանիք:

45. Երբ ծնողը կամ օրինական խնամակալը դիմում է հանրային, մասնավոր գործակալությունների կամ հաստատությունների՝ ցանկանալով կարճատև կամ անորոշ ժամկետով լքել երեխային, պետությունները պետք է ապահովեն խորհրդատվությամբ և սոցիալական աջակցությամբ՝ հորդորելով շարունակել երեխայի խնամքը: Երեխան պետք է մուտք գործի այլընտրանքային խնամք միայն այն դեպքում, երբ հնարավոր առաջարկությունները սպառվել են, և առկա են հիմնավորումներ այլընտրանքային խնամքի համար:

46. Պետք է իրականացնել հատուկ դասընթացներ ուսուցիչների և երեխաների հետ աշխատողների համար, որը կօգնի նրանց՝ բացահայտելու բռնության, անտեսման, չարաշահման կամ լքվածության վտանգը և դրա մասին տեղյակ պահելու համապատասխան մարմիններին:

47. Ծնողի կամքին հակառակ երեխային ընտանիքից հեռացնելու ցանկացած որոշում պետք է ընդունվի իրավասու մարմինների կողմից, որոնք պետք է կիրառեն համապատասխան օրենք և դատական քննության ընթացակարգեր: Ծնողներին պետք է ապահովել ճիշտ բողոքարկման ընթացակարգի մասին տեղեկատվությամբ և համապատասխան իրավական ներկայացուցչությամբ:

48. Երբ երեխայի միակ կամ հիմնական խնամողին սպառնում է ազատազրկում, ինչը նախնական մեկուսացման կամ դատապարտման մասին որոշման արդյունք է, հնարավորության դեպքում պետք է կիրառվեն ազատազրկման հետ չկապված խափանման և պատասխանատվության միջոցներ՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահը: Պետությունները պետք է հաշվի առնեն

երեխայի շահերը, երբ որոշում են կայացնում քրեակատարողական հիմնարկում ծնված կամ քրեակատարողական հիմնարկում ծնողների հետ ապրող երեխային տեղափոխելու մասին: Այդ երեխաների տեղափոխման հարցին նույն ձևով պետք է մոտենալ, ինչպես մյուս բոլոր դեպքերում, երբ խոսքը մեկուսացման մասին է: Ամեն ջանք պետք է գործադրվի, որպեսզի իրենց ծնողի հետ միասին քրեակատարողական հիմնարկում գտնվող երեխաները պատշաճ խնամք ստանան և պաշտպանվեն, միևնույն ժամանակ ազատ, անկախ քաղաքացիներ լինեն և ներգրավվեն համայնքի միջոցառումներին:

Բ. ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ

49. Որպես կանոն, երբ անհրաժեշտ է նախապատրաստել և աջակցել երեխային ու ընտանիքին հնարավոր վերամիավորման նպատակով, ընտանիքը պետք է գնահատվի լիազորված անձի կամ թիմի կողմից, որի կազմում բազմամասնագիտական խմբի անդամներ են: Պետք է կատարվի շահագրգիռ անձանց խորհրդատվություն (երեխա, ընտանիք, այլընտրանքային խնամող), որպեսզի որոշվի երեխայի և ընտանիքի վերամիավորման հարցը. արդյո՞ք դա բխում է երեխայի լավագույն շահերից, ի՞նչ քայլեր է ընդգրկում, և ո՞վ է իրականացնելու հսկողությունը:

50. Այս առումով թե՛ վերամիավորման, թե՛ ընտանիքի ու այլընտրանքային խնամողի հիմնական խնդիրները պետք է ամրագրված լինեն գրավոր և համաձայնեցված՝ բոլոր շահարգրգիռ կողմերի հետ:

51. Վերամիավորում իրականացնելու համար երեխայի ու նրա ընտանիքի հետ կանոնավոր և անհրաժեշտ կապերը պետք է զարգանան, աջակցություն ստանան և վերահսկվեն իրավասու մարմինների կողմից:

52. Երեխայի և նրա ընտանիքի վերամիավորման որոշման համար պետք է մշակել աստիճանական և վերահսկվող գործընթաց, որն ուղեկցվում է հետևողական և աջակցվող միջոցառումներով՝ հաշվի առնելով երեխայի տարիքը, կարիքները, զարգացող կարողությունները, ինչպես նաև բաժանման պատճառը:

V. ԽՆԱՄՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

53. Որպես կանոն՝ առնչվելով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հոգեհուզական, սոցիալական և այլ կարիքներին՝ պետությունը պետք է ձեռնարկի համապատասխան միջոցներ՝ ապահովելու օրենսդրական, քաղաքական և ֆինանսական պայմանները բավա-

ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ

Այլընտրանքային խնամքի տակ կամ դրա շեմին գտնվող երեխաների ընտանիքների վերամիավորման դեպքերը կարևոր մաս են խնամքի վերանայման գործընթացում:

ԱՐԴՅՈ՞Ք ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅՈՒՆԸ

... նպաստում է ընտանիքի և երեխաների այլընտրանքային խնամքի վերաբերյալ որոշման բողոքարկմանը՝ այդպիսով փորձելով ապահովել վերամիավորումը սեփական պայմանների հիման վրա,

... ապահովում է երեխայի տեղավորումը նրա ընտանիքին և համայնքին մոտ՝ նվազեցնելով երեխայի հեռացումը, հնարավորություն տալով նրան պարբերաբար կապ ունենալու ընտանիքի հետ՝ հնարավոր վերամիավորման նպատակով,

... շեշտադրում է երեխայի և նրա ընտանքի վերամիավորման ցանկալի և անհրաժեշտ քննարկումը՝ որպես խնամքի տեղավորման հիմնական գործոն,

... երաշխավորում է, որ վերամիավորման գործընթացում երեխաները և նրանց ընտանիքներն ակտիվ ներգրավված լինեն հնարավոր որոշումների կայացման հարցում,

... ապահովում է, որ երեխայի և նրա ընտանիքի վերամիավորման որոշմամբ ծրագրված և մշտական աջակցություն տրամադրվի ընտանիքին:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

Հաջորդ քայլը անհրաժեշտության դեպքում հասանելիության հարցն է, որոշումը թե այլընտրանքային խնամքի որ տեսակն է նախընտրելի:

© R. Fleischander

ԱՐԴՅՈ՞Ք ՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

... պարտավորեցնում է խնամք իրականացնողներին ապահովելու բազմամասնագիտական հնարավոր որոշումների պարտադիր կայացում, որին մասնակցում են երեխաները և նրանց ընտանիքները,

... տրամադրում է համապատասխան կարգավորող համակարգ՝ վերահսկելու խնամք իրականացնողների լիազորությունները, գրանցումը, մոնիթորինգը և հաշվետվությունը,

... պարտավորեցնում է խնամք իրականացնողներին՝ ապահովելու սկզբում կատարված համապարփակ գրանցումները այնպես, որ, օրինակ՝ նախնական որոշում կայացնելու գործընթացը հիմք հանդիսանա հետագա խնամքի ծրագրման և պարբերական վերանայման համար,

... պարտավորեցնում է, որ երեխայի տեղավորման հետ կապված պարբերական վերանայումները լիովին հաշվի առնեն երեխայի անձնական փորձից բխող խնամքի ընդհանուր պայմանները, տեղավորման շարունակական անհրաժեշտությունը, ինչպես նաև երեխայի կարծիքը,

... պարտավորեցնում է խնամք իրականացնողներին՝ անհատական մոտեցում ապահովելու խնամքի տարբերակի որոշման ընթացքում, որը կնպաստի ընտանիքի վերամիավորման միջոցով խնամքի ծրագրման կայուն ու մշտական ընթացքին կամ այլընտրանքային խնամքի իրականացման շարունակությանը:

որող այլընտանքային խնամքի տարբերակներ՝ ընտանիքի և համայնքի վրա հիմնված լուծումներով:

54. Պետությունները պետք է ապահովեն այլընտրանքային խնամքի այն տարբերակների հասանելիությունը, որոնք հրատապության դեպքում, կարճաժամկետ և երկարաժամկետ խնամքի համար համապատասխանում են Ուղեցույցում ներկայացված տարբերակներին:

55. Պետությունները պետք է ապահովեն, որ երեխաների այլընտրանքային խնամքով զբաղվող իրավաբանական և ֆիզիկական բոլոր անձինք իրավասու մարմինների կողմից ստանան համապատասխան թույլտվություն. սա համարվում է մոնիթորինգի առարկա, և վերանայումը կատարվում է ներկա Ուղեցույցի սկզբունքների համաձայն: Այս նպատակով վերոնշյալ մարմինների կողմից պետք է մշակված լինեն խնամք իրականացնողների մասնագիտական և էթիկական համապատասխանության չափանիշներ՝ նրանց հավաստագրելու, մոնիթորինգի և վերահսկողության համար:

56. Ոչ ֆորմալ խնամքի դեպքում երեխայի հետ կապված հարցերում՝ արդյո՞ք նա պետք է գտնվի ընդլայնված ընտանիքում, ընկերների կամ այլ անձանց հետ, պետությունը պետք է հնարավորինս խրախուսի խնամողներին, որ նրանք տեղեկացնեն համապատասխան մարմիններին, և նրանք ու երեխան կարողանան ստանալ անհրաժեշտ ֆինանսական և այլ տեսակի աջակցություն՝ երեխայի բարեկեցության և պաշտպանության համար: Անհրաժեշտության դեպքում պետք է ըստ պատշաճի խրախուսել և հնարավորություն տալ ոչ ֆորմալ խնամողներին՝ երեխայի և ծնողների համաձայնությամբ ֆորմալացնելու խնամքի ծրագրման գործընթացը որոշակի ընդմիջումից հետո, որպեսզի երեխայի տեղավորումը բխի երեխայի լավագույն շահերից և շարունակվի նաև հետագայում:

VI. ԽՆԱՄՔԻ ԱՌԱՎԵԼ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՏԵՍԱԿԻ ՈՐՈՇՈՒՄ

57. Երեխայի խնամքի վերաբերյալ նրա լավագույն շահերից բխող որոշում կայացնելը կատարվում է դատական, վարչական կամ այլ համապատասխան և ընդունված կարգով, իրավական երաշխիքներով՝ ըստ անհրաժեշտության յուրաքանչյուր իրավական ընթացակարգում ներառելով երեխաների իրավաբանական ներկայացուցիչներին: Որոշումը պետք է կառուցվի ճշգրիտ գնահատման, ծրագրման և վերանայման հիման վրա՝ համակարգերի և մեխանիզմների ձևավորման միջոցով, որն անհրաժեշտ է որակավորում ունեցող մասնագիտական

թիմի կողմից յուրաքանչյուր դեպքի քննարկմանը: Երեխայի հետ լիարժեք խորհրդատվություն պետք է լինի բոլոր փուլերում՝ հաշվի առնելով երեխայի, նրա ծնողների և խնամակալների կարողությունները: Այս նպատակով շահագրգիռ կողմերը պետք է ապահովվեն անհրաժեշտ տեղեկատվությամբ և հիմնվեն իրենց կարծիքի վրա: Պետությունը պետք է յուրաքանչյուր առաջարկ ապահովի դասընթացի համապատասխան ռեսուրսներով և ուղիներով ու մասնագիտական պատասխանատվություն սահմանի լավագույն խնամքի որոշման նպատակով, որպեսզի ապահովի տվյալ դրույթների իրականացումը:

58. Գնահատումը պետք է իրականացվի արագ, բազմակողմանի և մանրազնին: Անհրաժեշտ է հաշվի առնել երեխայի անմիջական ապահովությունը և բարեկեցությունը, ինչպես նաև նրա երկարատև խնամքը և զարգացումը՝ ապահովելով երեխայի անձնական և զարգացման առանձնահատկությունները, էթնիկ, մշակութային, լեզվական և կրոնական պատկանելությունը, ընտանիքի և սոցիալական միջավայրը, բժշկական պատմությունը և այլ հատուկ կարիքներ:

59. Արդյունքում մշակված նախնական և վերջնական զեկույցները պետք է կիրառվեն որպես հիմնական գործիքներ՝ դրանց ընդունումից հետո համապատասխան մարմինների կողմից որոշումները պլանավորելու համար, միջհամագործակցություն ստեղծելու տեսլականով՝ խուսափելով ոչ պատշաճ կամ հակասական որոշումներից:

60. Խնամքի վայրի հաճախակի փոփոխությունները անբարենպաստ են երեխայի զարգացման համար ու խանգարում են կապվածություն ստեղծելուն, այդ իսկ պատճառով դրանցից պետք է խուսափել: Կարճատև տեղավորումը պետք է ունենա հետագայում մշտական լուծում ապահովելու նպատակ: Մշտական տեղավորումը երեխայի համար պետք է իրականացվի առանց չպատճառաբանված հետաձգման, երեխայի բնական կամ ընդլայնված ընտանիքի հետ վերամիավորման կամ, եթե դա հնարավոր չէ, այլընտրանքային տիպի կայուն ընտանեկան միջավայրում, կամ, ինչպես նշված է պարբերություն 21-ում, հաստատության կայուն և պատշաճ խնամքի ներքո:

61. Խնամքի տրամադրման և ապահովման ծրագրումը պետք է իրականացվի հնարավորինս սեղմ ժամկետներում, լավագույն դեպքում՝ մինչև երեխայի խնամքն սկսելը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր տարբերակի անմիջական և երկարատև առավելություններն ու թերությունները, պետք է կազմվեն կարճաժամկետ և երկարաժամկետ առաջարկներ:

62. Խնամքի տրամադրման և ապահովման ծրագրման ընթացքում պետք է հաշվի առնել, մասնավորապես, իր ընտանիքի հետ երեխայի կապվածության

բնույթը, երեխայի բարեկեցությունը, ներդաշնակ զարգացումը, կարիքները կամ իրեն ընտանիքի անդամ զգալու ցանկությունն ապահովող՝ ընտանիքի կարողությունները, երեխայի ցանկությունը՝ մնալու իր համայնքում կամ երկրում՝ իր մշակութային, լեզվական, կրոնական արմատներով, և հարաբերություններ ունենալու եղբայրների, քույրերի հետ՝ բաժանումից խուսափելու նպատակով:

63. Ծրագրում պետք է հստակ նշվեն, մասնավորապես, տեղափոխման նպատակները և դրանց հասնելու միջոցները:

64. Երեխան և նրա ընտանիքը կամ օրինական խնամակալը պետք է տեղեկացված լինեն այլընտրանքային խնամքի տարբերակների, տվյալ հարցում իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

65. Նախապատրաստումը, իրականացումը և գնահատումը՝ որպես երեխայի պաշտպանության միջոցառումներ, պետք է իրականացվեն առավելագույնս՝ երեխայի ծնողների, օրինական խնամողների և հնարավոր խնամատարների մասնակցությամբ՝ հաշվի առնելով երեխայի կարիքները, համոզմունքները և հատուկ ցանկությունները: Երեխայի ծնողները, օրինական խնամողները կամ երեխայի կյանքում կարևոր այլ անձինք ցանկացած որոշման կայացման գործընթացում կարող են խորհրդակցել իրավասու մարմինների հետ:

66. Պետությունը պետք է երաշխավորի, որ դատարանի, վարչական կամ պատասխանատու այլ մարմնի պատշաճ որոշման արդյունքում այլընտրանքային խնամքի հանձնված յուրաքանչյուր երեխա, ինչպես նաև այդ երե-

խայի ծնողները կամ ծնողական իրավունք ունեցող այլ անձինք հնարավորություն ունենան տեղավորման որոշման մասին դատարանի առաջ կարծիք արտահայտելու, իմանան իրենց իրավունքները դրա վերաբերյալ և աջակցություն ստանան այդ անելիս:

67. Պետությունը պետք է երաշխավորի, որ ժամանակավոր խնամքի տակ գտնվող յուրաքանչյուր երեխա իրավունք ունենա պարբերաբար վերանայելու (նախընտրելի է երեք ամիսը մեկ անգամ) իրեն անհարժեշտ բուժումն ու խնամքը՝ հաշվի առնելով երեխայի զարգացման առանձնահատկությունները, այլ կարիքները, ընտանիքում փոփոխվող միջավայրն ու տեղափոխման համարժեք և անհրաժեշտ հանգամանքները: Վերանայումը պետք է իրականացվի լիազորված և մասնագիտացված անձանց կողմից՝ այդ գործընթացին լիարժեք մասնակից դարձնելով երեխային և նրա կյանքում կարևոր դեր ունեցող բոլոր անձանց:

68. Երեխային պետք է նախապատրաստել խնամքի ոլորտում կայանալիք փոփոխություններին, որոնք ծրագրման և վերանայման գործընթացի արդյունք են:

VII. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Ա. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

69. Պետության և համապատասխան մարմինների պարտավորությունն է ապահովել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ֆորմալ և ոչ ֆորմալ խնամքի մշակման և իրականացման համակարգված քաղաքականությունը: Նման քաղաքականությունը պետք է հիմնված լինի իրական տեղեկատվության և վիճակագրական տվյալների վրա: Պետք է սահմանվի երեխայի համար պատասխանատու անձի որոշման գործընթացը՝ հաշվի առնելով երեխայի ծնողների ունեցած դերը նրա կյանքում, հիմնական խնամողների պաշտպանվածությունը, խնամքը և զարգացումը: Ենթադրվող պատասխանատվությունը, եթե հակառակ իրավիճակ չստացվի, երեխայի ծնողներին կամ հիմնական խնամողներին է պատկանում:

70. Պետական բոլոր մարմինները, որոնք ներգրավված են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ուղղորդման և աջակցության գործընթացում, համագործակցելով քաղաքացիական հասարակության հետ, պետք է ընդունեն քաղաքականությունը և ընթացակարգերը, փոխանակեն օգտակար տեղեկատվություն և համագործակցեն գործակալությունների և անհատների հետ՝ ապահովելու արդյունավետ խնամք՝ նման երեխաների վերականգնման և պաշտպանության համար: Այլընտրանքային խնամքի վերահսկման պատասխանատվություն ունեցող գործակալությունների տեղակայումն ու կառուցվածքը պետք է լինեն այնպիսին, որ առավելագույն կերպով հասանելի լինեն նրանց, ովքեր դրանց ծառայության կարիքն ունեն:

71. Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել այլընտրանքային խնամքի իրականացման որակին, ինչպես շուրջօրյա, այնպես էլ ընտանիքահեն խնամքի պարագայում, մասնավորապես խնամողների մասնագիտական հմտությունների, ընտրության, վերապատրաստման և վերահսկման հետ կապված: Այս դերը և գործառույթները պետք է հստակ սահմանել ու պարզել երեխայի ծնողների և օրինական խնամողների հետ:

72. Յուրաքանչյուր երկրի իրավասու մարմիններ պետք է կազմեն այլընտրանքային խնամքի տակ գտնվող երեխաների իրավունքների վերաբերյալ ընդլայնված փաստաթուղթ՝ որպես օրինակ ունենալով ներկա Ուղեցույցը: Այլընտրանքային խնամքի տակ գտնվող երեխաները պետք է ունակ լինեն հասկանալու խնամքի կանոնները, կանոնակարգերը և նպատակները, ինչպես նաև իրենց իրավունքները և պարտականությունները:

73. Այլընտրանքային խնամքի բոլոր դրույթները պետք է ամրագրված լինեն գրավոր համաձայնագրում, որտեղ պետք է շարադրված լինեն իրականացվող ծառայության նպատակները, առարկան, բնույթը և պատասխանատվությունները երեխայի նկատմամբ: Համաձայնագիրը պետք է արտացոլի Երեխայի իրավունքների կոնվենցիայի չափանիշները, ներկա Ուղեցույցը և կիրառվող օրենքը: Խնամք իրականացնող բոլոր անձինք պետք է ունենան համապատասխան որակավորում, որը կբավարարի իրավական պահանջներին և թույլ կտա իրականացնել երեխայի այլընտրանքային խնամք:

74. Նորմատիվ-իրավական հիմքը պետք է ստանդարտ գործընթաց մշակի այլընտրանքային խնամքի տակ գտնվող երեխայի ուղղորդման և ընդունման համար:

75. Այլընտրանքային խնամքի դեպքում մշակութային և կրոնական փորձը, այդ թվում՝ գենդերային հեռանկարները, պետք է ընդունվեն և խրախուսվեն այն չափով, որ համապատասխանեն երեխայի իրավունքներին և բխեն նրա շահերից: Նման փորձի գործընթացը պետք է իրականացվի, խրախուսվի՝ ներգրավելով մշակույթի և կրոնի ներկայացուցիչների, մասնագետների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամողների, ծնողների, շահագրգիռ այլ կողմերի, ինչպես նաև երեխաների:

1. Ոչ ֆորմալ խնամք

76. Թե՛ անհատի, թե՛ ընտանիքի կողմից ոչ ֆորմալ խնամքի իրականացման համապատասխան պայմաններն ապահովելու նպատակով պետությունը պետք է ճանաչի նման խնամքի դերը և ընդունի համապատասխան միջոցներ՝ հնարավորինս գնահատելու խնամքի այդ տեսակը, որը, հնարավոր է, պահանջի հատուկ աջակցություն կամ վերահսկողություն:

77. Իրավասու մարմինները հնարավորության դեպքում պետք է խրախուսեն ոչ ֆորմալ խնամողներին տեղեկացնել խնամքի մատուցման մասին ու պետք է ձգտեն ապահովել նրանց համար բոլոր հնարավոր ծառայությունների ու արտոնությունների մատչելիությունը, որոնք կնպաստեն երեխաների լավագույն խնամքին ու պաշտպանությանը:

78. Պետությունը պետք է դե ֆակտո ճանաչի երեխաների ոչ ֆորմալ խնամողների պատասխանատվությունների սահմանները:

79. Պետությունը պետք է մշակի հատուկ և համապատասխան չափորոշիչներ՝ պաշտպանելու ոչ ֆորմալ խնամքի տակ գտնվող երեխաներին բռնությունից, չարաշահումից, աշխատանքային և այլ տեսակի շահագործումներից՝ հատուկ ուշադրության ներքո պահելով այն ոչ ֆորմալ խնամողներին, որոնք երեխայի հետ հարազատական կապ չունեն, երեխային նախկինում անծանոթ են եղել կամ ապրել են նրա բնակության վայրից հեռու:

2. Ցանկացած տեսակի ֆորմալ այլընտրանքային խնամքի դիմելու ընդհանուր պայմաններ

80. Երեխայի փոխանցումն այլընտրանքային խնամքի պետք է իրականացվի զգուշորեն և երեխայի համար բարենպաստ մոտեցումներով՝ մասնավորապես ներգրավելով հատուկ պատրաստված մասնագետների, սկզբունքորեն՝ առանց համազգեստի աշխատակիցների:

81. Երբ երեխան գտնվում է այլընտրանքային խնամքի ներքո, նրա կապն ընտանիքի, ինչպես նաև այլ՝ նրան մոտ մարդկանց՝ ընկերների, հարևանների, նախկին խնամողների հետ, պետք է խրախուսվի և աջակցվի՝ ելնելով երեխայի իրավունքների պաշտպանությունից և լավագույն շահերից: Երեխան պետք է տեղեկատվություն ունենա իր ընտանիքի մասին, երբ ընտանիքի հետ կապը բացակայում է:

82. Պետությունը պետք է հատուկ ուշադրություն դարձնի այն բանին, որ այլընտրանքային խնամքի ներքո գտնվող երեխաները հնարավորություն ունենան շփվելու

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ (I)

Ուղեցույցը բնորոշում է ֆորմալ և ոչ ֆորմալ խնամքը, որոնց դեպքում դժվար է տարբերակել պարտավորությունները: Ոչ ֆորմալ խնամողները խրախուսվում են՝ հայտ ներկայացնելով սոցիալական ծառայությունների մատչելիության համար, իսկ ֆորմալ խնամողների համար գործում են ընդհանուր պայմաններ:

ԱՐԴՅՈ՞Ք ՊԵՏԱԿԱՆ ՌԱՁՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

... վերահսկում է հաստատություններին և սահմանում համապատասխան ստանդարտներ, որոնք ապահովում են պատշաճ ֆիզիկական միջավայր՝ անվտանգության և առողջության, սանիտարահիգիենիկ պայմանների կարգավորման նպատակով, ինչը բխում է երեխայի անձնական կյանքը հարգելու իրավունքից,

... պարտավորեցնում է ֆորմալ խնամք իրականացնողներին ապահովել մասնագիտական որակավորմամբ և համապատասխան դասընթացներով, օրինակ՝ երեխայի իրավունքների և տարիքային զարգացման խնդիրների վերաբերյալ,

... ապահովում է այնպիսի փորձ, երբ առկա է մշտական կապ այլընտրանքային խնամքի ներքո գտնվող երեխայի, նրա ծնողների և ընտանիքի այլ անդամների, ընկերների ու համայնքի միջև,

... կանխատեսում է այլընտրանքային խնամքի ներքո գտնվող երեխաների նկատմամբ սոցիալական մոտեցումների, ստիգմատիզացիայի կամ հնարավոր խտրականության մարտահրավերների իրականացում, օրինակ՝ կրթության, առողջապահության կամ աշխատանքային ծառայությունների հասանելիություն,

... ապահովում է, որ խնամք իրականացնողները և հաստատությունները սահմանեն հավասարակշռություն խնամքի, պաշտպանության, զարգացման, ինչպես նաև երեխայի հնարավորությունների միջև:

իրենց ծնողների հետ, երբ ծնողները կալանավորված են կամ տևական բուժման են ենթարկվում, նաև համապատասխան խորհրդատվություն և աջակցություն պետք է տրամադրվի երեխաներին:

83. Խնամողները պետք է երեխաներին ապահովեն առողջ սնունդով՝ տվյալ երկրի սովորություններին և առողջ սննդակարգին համապատասխան, ինչպես նաև հաշվի առնելով երեխայի կրոնական համոզմունքները: Սննդային հավելումները պետք է իրականացվեն ըստ անհրաժեշտության:

84. Խնամողները պետք է հետևեն այն երեխաների խնամքին և առողջությանը, որոնց համար պատասխանատու են, և իրականացնեն աջակցություն՝ բժշկական խնամք, խորհրդատվություն:

85. Տվյալ համայնքում երեխաները պետք է ստանան պարտադիր, ոչ պարտադիր և մասնագիտական կրթություն՝ համաձայն իրենց իրավունքների:

86. Խնամողները պետք է վստահեցնեն, որ պաշտպանված են յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ հատուկ կարիք ունեցող, հաշմանդամ, ՁԻԱՀ և ՄԻԱՎ-ով հիվանդ երեխաների իրավունքները: Անհրաժեշտ է խնամքի միջավայրում և դրանից դուրս նրանց համար կազմակերպել խաղեր և այլ աշխատանքներ: Տվյալ համայնքում երեխաները պետք է հաղորդակցվեն միմյանց հետ:

87. Անհրաժեշտ է խնամքի բոլոր տեսակների պարագայում ապահովել մանուկների ու փոքրահասակ երեխաների՝ ներառյալ հատուկ կարիքներ ունեցողների յուրահատուկ անվտանգության, առողջության, սնուցման, զարգացման և այլ կարիքները, այդ թվում նաև ապահովել նրանց շարունակական կապը կոնկրետ որևէ մեկ խնամողի հետ:

88. Երեխաներին պետք է թույլատրել զբաղվել իրենց կրոնական և հոգևոր կյանքով, այսինքն այցելել իրենց համայնքի կրոնական ներկայացուցչին, ինքնակամ մասնակցել կրոնական հավաքներին, ստանալ կրոնական ուսուցում կամ խորհրդատվություն: Պետք է հարգել երեխայի կրոնական նախասիրությունները: Երեխային չպետք է ստիպել կամ համոզել, որ հրաժարվի իր հավատքից:

89. Երեխաների համար պատասխանատու բոլոր անձինք պետք է հարգեն ու խթանեն անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը՝ ներառյալ հիգիենիկ ու սանիտարական կարիքների համար համապատասխան հարմարությունները, գենդերային տարբերությունների հանդեպ հարգանքը, ու անձնական իրերի համար անվտանգ ու հասանելի պահեստային տարածքը:

90. Երեխաների հետ նորմալ և ապահով հարաբերություններ ստեղծելիս խնամողները պետք է հասկանան իրենց դերի կարևորությունը և ի վիճակի լինեն այն իրականացնելու:

91. Խնամքի հաստատության պայմանները պետք է համապատասխանեն առողջապահական և անվտանգության չափանիշներին:

92. Պետությունը պատասխանատվություն է կրում այլընտրանքային խնամքի տակ գտնվող երեխաների բնակության վայրի համար. պետք է վերահսկել սենյակները, որտեղ երեխաները պետք է պաշտպանված լինեն

ոտնձգություններից: Բնակվելու պայմաններն ընտրելիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել յուրաքանչյուր երեխայի տարիքային առանձնահատկություններին, հասունության մակարդակին և խոցելիության աստիճանին: Երեխաների պաշտպանությանն ուղղված միջոցառումները պետք է համապատասխանեն գործող օրենքներին և չպարունակեն ոչ խելամիտ սահմանափակումներ՝ կապված նրանց ազատության հետ: Խնամողները պետք է այդ երեխաներին համեմատեն համայնքում ապրող մյուս երեխաների հետ:

93. Այլընտրանքային խնամքի բոլոր հաստատությունները պետք է զերծ պահեն երեխաներին թրաֆիքինգից, վաճառքից և շահագործման այլ ձևերից: Երեխաների ազատության որևէ սահմանափակում չպետք է լինի ավելի խիստ, քան անհրաժեշտ է նրանց վերոհիշյալ վտանգներից պաշտպանելու համար:

94. Բոլոր խնամողները պետք է խթանեն և խրախուսեն երեխաներին և երիտասարդներին ընդունելու իրենց իրազեկված որոշումները՝ հաշվի առնելով նրանում առկա ռիսկերը, երեխաների տարիքը, նրանց աճի ու զարգացման կարողությունները:

95. Պետությունները, կազմակերպությունները, հաստատությունները, դպրոցները և համայնքային այլ ծառայություններ պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն, որպեսզի այլընտրանքային խնամքում գտնվող երեխաները խնամքի ընթացքում կամ դրանից հետո չենթարկվեն խարանման: Ի թիվս դրանց՝ պետք է գործադրվեն ջանքեր, որպեսզի այլընտրանքային խնամք ստացող երեխաները հնարավորինս քիչ տարբերվեն իրենց հասակակիցներից:

96. Խստորեն պետք է արգելվեն հետևյալ գործողությունները, որոնք սահմանված են մարդու իրավունքների միջազգային օրենքով՝ երեխաներին տանջելը, դաժանությունը, անմարդկային կամ արժանապատվությունը ստորացնող վերաբերմունքը, ֆիզիկական կամ հոգեբանական բռնությունը, որոնք կազդեն երեխայի ֆիզիկական կամ մտավոր առողջության վրա: Պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները նման գործողությունները կանխարգելելու համար և վստահեցնեն, որ դրանք պատժվում են օրենքով: Երբեք որպես պատժամիջոց չպետք է կիրառվի երեխայի ընտանիքի անդամների կամ իր համար կարևորություն ունեցող որևէ այլ անձի հետ շփման արգելքը:

97. Համաձայն օրենքի՝ ուժի և սահմանափակումների կիրառումը չպետք է իրականացվի, եթե չկա դրա անհրաժեշտությունը երեխայի ֆիզիկական կամ ֆիզիոլոգիական շահերից ելնելով: Այն պետք է իրականացվի պատշաճ ձևով՝ առանց ոտնահարելու երեխայի իրավունքները: Դեղորայքի

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ (II)

ԱՐԴՅՈ՞Ք ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԸ

... արգելում է բռնության տեսակներն այլընտանքային խնամքի տակ գտնվող երեխաների նկատմամբ, պարտավորեցնում խնամողների վերապատրաստումը և իրազեկումը,

... պարտավորեցնում է խնամողներին, որպեսզի արձագանքեն այլընտրանքային խնամքի տակ գտնվող երեխաների բռնության դեպքերին և զեկուցեն այդ մասին,

... պահանջում է խնամողներից արձագանքել բռնության դեպքերի ժամանակ և անհրաժեշտության դեպքում միջոցներ կիրառել,

... արձանագրում է ֆիզիկական չարաշահումների դեպքերը և ժամանակին արձագանքում դրանց,

... մշակում է կանոնակարգող կառուցվածք բողոքների ընթացակարգերի և դրանց վերահսկման վերաբերյալ,

... երաշխավորում է, որ խնամողներն արձագանքեն երեխայի բողոքներին, օրինակ՝ «վստահելի անձ»-ի աջակցությամբ:

© B. Neeleman

միջոցով սահմանափակումները պետք է իրականացվեն՝ ելնելով առողջապահական կարիքներից և միայն մասնագետի գնահատման ու նշանակման հիման վրա:

98. Խնամվող երեխաները պետք է ունենան որևէ վստահելի անձ, որպեսզի խորհրդակցեն նրա հետ, վստահեն իրենց գաղտնիքները: Տվյալ անձը պետք է նշանակվի իրավասու մարմինների կողմից՝ տվյալ երեխայի հետ համաձայնեցնելով: Երեխան պետք է իրազեկ լինի իրավական կամ էթիկական այն չափորոշիչների մասին, որոնք կիրառվում են գաղտնիությունը խախտելու որոշակի հանգամանքներում:

99. Խնամվող երեխաները պետք է տեղյակ լինեն արդյունավետ և անկողմնակալ մեխանիզմներից, որոնց միջոցով կարող են դիմել ոստիկաններին՝ արտահայտելու մտահոգությունները՝ իրենց նկատմամբ վերաբերմունքի և բնակվելու պայմանների վերաբերյալ: Նման մեխանիզմները պետք է ներառեն նախնական խորհրդատվություն, հետադարձ կապ, իրականացում և հետագա խորհրդատվություն: Նախկինում խնամքի փորձ ունեցող երիտասարդները պետք է ներգրավվեն այս գործընթացում և ունենան կարծիք հայտնելու իրավունք: Այս գործընթացը պետք է վարեն իրավասու անձինք, որոնք ունեն երեխաների և երիտասարդների հետ աշխատելու փորձ:

100. Երեխայի ինքնաճանաչողության զգացումը խթանելու համար անհրաժեշտ է նրան մատուցել համապատասխան տեղեկատվություն, նկարներ, անձնական իրեր և լուսանկարներ, որոնք վերաբերում են երեխայի կյանքի որոշակի փուլերին և որոնք պետք է հասանելի լինեն երեխայի համար իր կյանքի ողջ ընթացքում:

Բ. ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԵԽԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ

101. Այն իրավիճակում, երբ երեխայի ծնողները բացակայում են կամ ի վիճակի չեն երեխայի օգտին կայացնելու առօրյա որոշումներ, և երեխայի տեղավորումն այլընտրանքային հաստատությունում լիազորված է համապատասխան վարչական կամ իրավական մարմնի կողմից, խնամքն իրականացնող անձը պետք է օրինական իրավունք ունենա որոշումներ կայացնելու ծնողների փոխարեն՝ խորհրդակցելով երեխայի հետ: Պետությունները պետք է վստահեցնեն, որ սույն մեխանիզմը գործում է նման անհատ կամ կազմակերպություն նշանակելու համար:

102. Նման իրավական պատասխանատվությունը պետք է ուղղակիորեն վերահսկվի իրավասու մարմինների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների կողմից: Խնամքն իրականացնող անձի կամ կազմակերպության գործողությունների մասին պետք է զեկուցեն պատասխանատու անձինք:

103. Նման իրավական պատասխանատվություն ունեցող անձինք պետք է լինեն հարգանք վայելող անհատներ և ունենան երեխաների հարցերով զբաղվելու համապատասխան գիտելիքներ, ինչպես նաև ուղղակիորեն երեխաների հետ աշխատելու, նրանց հատուկ և մշակութային կարիքները հասկանալու հմտություններ: Նրանք պետք է անցնեն համապատասխան վերապատրաստում և ստանան մասնագիտական աջակցություն: Պետք է կարողանան կայացնել անկախ և անկողմնակալ որոշումներ, որոնք բխում են երեխաների շահերից, ապահովում նրանց բարեկեցությունը:

104. Պատասխանատու անձի կամ կազմակերպության դերը և պարտականությունները պետք է ներառեն հետևյալը.

ա) ապահովել, որ երեխաների իրավունքները պաշտպանված լինեն, երեխան ստանա համապատասխան խնամք, ապրելու պայմաններ, առողջապահական խնամք, զարգացման հնարավորություններ, հոգեբանական աջակցություն և արտահայտվելու հնարավորություն,

բ) ապահովել, որ երեխան իրազեկ լինի իր հետ կապված իրավական խնդիրներին, երեխայի կարծիքը հաշվի առնվի որոշում կայացնելու ժամանակ: Երեխան ստանա խորհրդատվություն և տեղեկացված լինի իր իրավունքների մասին,

գ) աջակցել երեխայի լավագույն շահերից բխող կայուն լուծում գտնելու գործընթացին,

դ) կապ ստեղծել երեխայի և երեխային ծառայություններ մատուցող տարբեր կազմակերպությունների միջև,

ե) աջակցել երեխային՝ գտնելու ընտանիք,

զ) երաշխավորել, որ ընտանիքի հետ վերամիավորումը բխում է երեխայի լավագույն շահերից,

է) օգնել երեխային կապ ունենալ իր ընտանիքի հետ:

1. Երեխայի խնամքի համար պատասխանատու կազմակերպություններ և հաստատություններ

105. Օրենսդրությունը պետք է սահմանի, որ սոցիալական խնամք իրականացնող կազմակերպությունները և հաստատությունները գրանցվեն և ստանան գործելու, աշխատելու իրավունք: Սույն կարգավորումներին չենթարկվելու դեպքում օրենսդրությունը պետք է ներառի պատժի միջոցներ: Կազմակերպությունը կամ հաստա-

տությունը պետք է ունենա իր նպատակները, գործառույթները, աշխատակազմը, համապատասխանորեն որակավորված մասնագետները, խնամքի պայմանները, ֆինանսական միջոցները և կառավարումը:

106. Համաձայն Ուղեցույցի՝ խնամք իրականացնող կազմակերպությունները և հաստատությունները պետք է ունենան իրենց կանոնադրությունը, դրույթները, որոնք պետք է հստակ շարադրեն նրա նպատակները, քաղաքականությունը, մեթոդները, որակյալ և համապատասխան խնամողի վերահսկումը և գնահատումը:

107. Խնամք իրականացնող կազմակերպությունները և հաստատություններն, ըստ Ուղեցույցի, պետք է ունենան համապատասխան աշխատակիցներ, սահմանեն նրանցից յուրաքանչյուրի դերը, ներառեն հաշվետվության հստակ ընթացակարգեր՝ թիմի որևէ անդամի հետ անհամաձայնության դեպքում:

108. Խնամքի ֆինանսավորման եղանակները երբեք չպետք է խրախուսեն երեխայի՝ առանց անհրաժեշտության կամ երկարատև տեղավորումը:

109. Անհրաժեշտ է կատարել տարբեր գրանցումներ կամ արձանագրություններ այլընտրանքային խնամքի կառավարման վերաբերյալ, ինչպես նաև մանրակրկիտ տվյալներ խնամքի տակ գտնվող բոլոր երեխաների, աշխատակիցների և ֆինանսական գործարքների վերաբերյալ:

110. Երեխաների տվյալները պետք է լինեն ամբողջական, վերանայված, գաղտնի և ապահով, դրանք պետք է ներառեն տեղեկություններ նրանց ընդունվելու և դուրս գրվելու վերաբերյալ: Պետք է լինեն համապատասխան փաստաթղթեր և անձնական այլ տեղեկություններ: Երեխայի ընտանիքի վերաբերյալ տեղեկատվությունը և կանոնավոր գնահատումների վրա հիմնված հաշվետվությունները պետք է կցվեն երեխայի անձնական գործին: Այս գրանցումները պետք է ուղեկցեն երեխային ամբողջ խնամքի ընթացքում:

111. Վերոհիշյալ գրառումները պետք է հասանելի լինեն երեխային, նրա ծնողներին և խնամողներին, ինչպես նաև հաշվի առնեն երեխայի իրավունքները՝ տվյալների գաղտնիության հարցում: Խորհրդատվություն պետք է մատուցել նախքան խնամքը, դրա ընթացքում և դրանից հետո:

112. Այլընտրանքային խնամքի բոլոր ծառայությունները պետք է վարեն յուրաքանչյուր երեխայի վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու հստակ քաղաքականություն:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԽՆԱՄՈՂՆԵՐ

Ուղեցույցը սահմանում է կանոնակարգող այն կառուցվածքը, որն ամրագրում է պետության պատասխանատվությունը, խնամողների, հաստատությունների և անհատ խնամողների լիազորությունները, վերահսկումը և հաշվետու լինելը:

ԱՐԴՅՈ՞Ք ՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝

... երաշխավորում է, որ խնամք իրականացնող կազմակերպությունները և հաստատությունները, ինչպես նաև աշխատակիցների հավաքագրման ներկայիս քաղաքականությունը թույլ տան իրականացնել մոնիթորինգ՝ պահպանելով խնամքի չափորոշիչները և ընթացակարգերը,

... պարտավորեցնում է խնամք իրականացնողներին կատարել ամենօրյա գրառումներ, պահպանել այդ գրառումների գաղտնիությունը և թույլ տալ երեխաներին անհրաժեշտության դեպքում օգտվել դրանցից,

... սահմանում է աշխատանքային նվազագույն չափորոշիչներ՝ երաշխավորելու հարմար աշխատանքային պայմաններ և համապատասխան վարձատրության չափ՝ պահպանելով խնամողների և այլ աշխատակիցների շահագրգռվածությունը,

... սահմանում է չափանիշներ խնամողների անձնական զարգացման և համապատասխան վերապատրաստման համար, օրինակ՝ երեխայի իրավունքների պաշտպանության օրենսդրության, երեխաների իրավունքների սահմանափակումների համապատասխան կիրառում, երեխայի զարգացման և կարիքների հետ կապված հարցեր:

ԽՆԱՄՔԻ ՁԵՎԵՐ

Հաշվի առնելով անհրաժեշտության համապատասխանությունը և որոշումներ կայացնելու սկզբունքները՝ անհրաժեշտ է քննարկել այլընտրանքային խնամքի մի շարք տարբերակներ՝ արձագանքելու և ճկունություն ապահովելու համար:

© P. Hahn

ԱՐԴՅՈ՞Ք ՊԵՏԱԿԱՆ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

... կազմում է պրոակտիվ օրակարգ՝ երեխայի այլընտրանքային խնամքը, ինչպես նաև խնամքն ընտանիքում իրականացնելու համար,

... հավաստիացնում է, որ խնամքի համակարգը համապատասխանում է համայնքների կարիքներին,

... թույլատրում է համապատասխան խորհրդատվություն մատուցել խնամողներին կամ կազմակերպություններին,

... երաշխավորում է, որ տվյալ երկրի խնամքի հաստատություններն իրականացնեն անհատական խնամք, փոքր խմբերով խնամք՝ բավարար քանակի և որակի մասնագետների միջոցով,

... ներկայացնում է համապատասխան հավաստագիր, որ խնամքի ընթացքում խնամողները պատշաճ կերպով են ծախսում տրամադրված ֆինանսական միջոցները:

113. Որպես դրական փորձ բոլոր գործակալությունները և կառույցները պետք է համակարգայնորեն ապահովեն, որ նախքան աշխատանքի ընդունելը խնամողներն ու երեխաների հետ ուղիղ շփման մեջ գտնվող այլ աշխատակիցները ենթարկվեն համապատասխան ու համընդգրկուն գնահատման առ այն, թե որքանով են նրանք համապատասխանում երեխաների հետ աշխատանքի համար:

114. Խնամողների աշխատանքի պայմանները և վարձատրությունը պետք է բավարարեն նրանց և խթան հանդիսանան, որ նրանք իրենց դերը պատշաճ կերպով կատարեն:

115. Բոլոր խնամողները պետք է վերապատրաստվեն այնպիսի դժվար իրավիճակների ուղղությամբ, ինչպիսիք են երեխայի հրատապ տեղափոխումը կամ մեկ այլ վայրում տեղավորումը և այլն: Պետք է հաշվի առնել նաև մշակութային, սոցիալական, գենդերային և կրոնական առանձնահատկությունները: Պետությունները պետք է համապատասխան ռեսուրսներ ու միջոցներ ապահովեն մասնագետ խնամողներ ընտրելու և աշխատանքի ընդունելու համար, որպեսզի նրանք կարողանան իրականացնել վերոհիշյալ պահանջները:

116. Խնամողները պետք է վերապատրաստվեն վարքային խնդիրներ ունեցող երեխաների, կոնֆլիկտների հաղթահարման մեթոդների և վնասակար գործողությունների ուղղությամբ:

117. Խնամք իրականացնող կազմակերպությունները պետք է անհրաժեշտության դեպքում արձագանքեն հատուկ կարիքներ ունեցող երեխաների խնդիրներին, հատկապես այն երեխաների, ովքեր հիվանդ են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով, այլ քրոնիկ ֆիզիկական կամ մտավոր հիվանդություններով ունեն ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամություն:

2. Խնամատար ընտանիքներ

118. Համապատասխան կազմակերպությունը կամ հաստատությունը պետք է ունենա մի համակարգ և իր աշխատողներին վերապատրաստի այնպես, որ նրանք գնահատեն ու համապատասխանեցնեն երեխայի կարիքները և պոտենցիալ խնամատարների ունակությունները և պատրաստեն բոլոր կողմերին տեղավորման գործընթացին:

119. Անհրաժեշտ է յուրաքանչյուր տարածքում հայտնաբերել խնամատարների մի խումբ, որը կարող է խնամել երեխաներին և պաշտպանել նրանց՝ միաժամանակ պահպանելով կապը ընտանիքի, համայնքի և մշակույթի հետ:

120. Անհրաժեշտ է խնամատար ընտանիքների համար ստեղծել աջակցման և խորհրդատվության ծառայություններ, որոնք պետք է պարբերականորեն տրամադրվեն խնամատարներին տեղավորումից առաջ, ընթացքում և հետո:

121. Խնամողները պետք է կարողանան իրենց ձայնը լսելի դարձնել և ներգործել քաղաքականության վրա:

122. Անհրաժեշտ է ստեղծել խնամատարների միություններ, որոնք կապահովեն փոխադարձ աջակցություն և կաջակցեն քաղաքականության մշակմանը:

Գ. ՇՈՒՐՋՕՐՅԱ ԽՆԱՄՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

123. Շուրջօրյա խնամք մատուցող հաստատությունները պետք է լինեն փոքր և զբաղվեն երեխաների իրավունքների պաշտպանությամբ ու կարիքների բավարարմամբ հնարավորինս ընտանեկան ու փոքր խմբային իրավիճակին մոտ ձևաչափով: Նրանց նպատակն է ժամանակավոր խնամք ապահովել և օժանդակել երեխայի՝ ընտանիքի հետ վերամիավորմանը կամ, եթե դա հնարավոր չէ, ապահովել երեխայի մշտական խնամքը այլ ընտանիքում, անհրաժեշտության դեպքում ընդունել քաֆալա՝ ըստ իսլամական իրավունքի:

124. Անհրաժեշտության դեպքում պետք է միջոցներ ձեռնարկվեն, որպեսզի բացառապես պաշտպանության ու այլընտրանքային խնամքի կարիք ունեցող երեխան տեղավորվի քրեական արդարադատության համակարգի հետ շփման մեջ գտնվող երեխաներից առանձին:

125. Ազգային և տեղական իշխանությունները պետք է մշակեն ընթացակարգեր, որպեսզի այդ հաստատություններում ընդունելությունը կատարվի բացառապես կարիքի համապատասխանության դեպում:

126. Պետությունները պետք է ապահովեն, որ հաստատությունում երեխայի խնամք իրականացնելու համար լինեն բավարար քանակությամբ հաստատություններ, խնամողներ, որոնք անհատական մոտեցում կցուցաբերեն երեխային, իսկ հնարավորության դեպքում ապահովեն նրանց կապը կոնկրետ որևէ մեկ խնամողի հետ: Խնամողները պետք է արդյունավետ իրականացնեն իրենց պարտականությունները երեխայի պաշտպանության գործում:

127. Օրենքները, քաղաքականությունները և կանոնակարգերը պետք է արգելեն գործակալությունների, հաստատությունների կամ անհատների կողմից երեխաների հավաքագրումը շուրջօրյա խնամքի հաստատությունում տեղավորելու նպատակով:

Դ. ՎԵՐԱՀՍԿՈՒՄ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

128. Երեխայի խնամքի իրականացմանը ներգրավված կազմակերպությունները, հաստատությունները և մասնագետները պետք է հաշվետու լինեն պետական գործակալությանը, որը կատարում է հաճախակի ստուգումներ, ծրագրված և ոչ ծրագրված այցեր, ինչպես նաև անցկացնում է հարցազրույցներ աշխատակիցների և երեխաների հետ:

129. Ստուգման գործառույթները պետք է ներառեն խնամողների վերապատրաստում և հմտությունների տրամադրում:

130. Պետությունները պետք է հավաստիացնեն, որ տեղերում կատարվում է անկախ մոնիթորինգ՝ հաշվի առնելով ազգային հաստատությունների հմտությունները մարդկանց իրավունքների պաշտպանման և խթանման գործում (the Paris Principles): Մոնիթորինգի մեխանիզմը պետք է մատչելի լինի երեխաներին, նրանց ծնողներին և խնամողներին: Մոնիթորինգի գործառույթներն են՝

ա) խորհրդատվություն երեխայի այլընտրանքային խնամքի ձևերի վերաբերյալ, այցեր խնամքի հաստատություններ և հետազոտություններ այն հաստատություններում, որտեղ ոտնահարվում են երեխայի իրավունքները, և երեխաների նկատմամբ բռնություններ են կատարվում,

բ) մշակել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների նկատմամբ իրավասու կազմակերպությունների վերաբերմունքի քաղաքականություն,

գ) ներկայացնել առաջարկներ և դիտարկումներ օրենսդրության նախագծերի վերաբերյալ,

դ) անկախ կերպով կազմել կանոնավոր հաշվետվություններ՝ Երեխայի իրավունքների պաշտպանության կոնվենցիայի և պետության կողմից երեխաների իրավունքների պաշտպանության կոմիտեի դրույթների համաձայն:

Ե. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԽՆԱՄՔԻՑ ՀԵՏՈ

131. Կազմակերպությունները կամ հաստատությունները պետք է ունենան հստակ ռազմավարություն և իրականացնեն համաձայնեցված ընթացակարգեր՝ խնամքը լքող երեխաների հետագա խնամքի վերաբերյալ: Ամբողջ խնամքի ընթացքում նրանք պետք է երեխային նախապատրաստեն, որ հույսը դնի իր վրա և ամբողջովին ինտեգրվի հասարակությանը՝ հիմնականում սոցիալական և կյանքի հմտությունների ձեռքբերման միջոցով, որոնք զարգանում են համայնքների կյանքին մասնակցելու միջոցով:

ԿՅԱՆՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԽՆԱՄՔԻՑ ՀԵՏՈ

Ուղեցույցը երեխային առաջարկում է սոցիալական աջակցություն՝ տրամադրելով նրան կյանքի հմտություններ՝ հաշվի առնելով խնամքից հետո այն դժվարությունների հաղթահարումը, որոնց կհանդիպեն երիտասարդները:

ԱՐԴՅՈ՞Ք ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅՈՒՆԸ

... նախատեսում է խնամքից հետո ճշգրիտ պլանավորման անհրաժեշտություն,

... պարտավորեցնում է խնամքն իրականացնողներին հավաստիացնել, որ խնամքից հետո երեխաները կստանան համապատասխան մասնագիտական կրթություն, կյանքի հմտությունների ուսուցում և այլ հնարավորություններ՝ իրենց ապագան կառուցելու համար,

... երաշխավորում է հատուկ ռեսուրսի տրամադրում, օրինակ՝ որևէ նվիրված աջակցող անձի, որը ուղեցույց կլինի երեխայի համար և խորհուրդներ կտա նրան խնամքը լքելուց հետո,

... կիրառում է «Բաց դռների քաղաքականությունը»՝ այլընտրանքային խնամքից դուրս եկած երեխաների հետ կապված: Այսինքն՝ կարո՞ղ են նրանք այցելել կամ հարաբերություններ պահպանել իրենց նախկին խնամողների հետ՝ որպես հետագա աջակցման ռեսուրս:

132. Մինչև խնամքը և խնամքից հետո անցումային շրջանում պետք է հաշվի առնվեն երեխաների սեռը, տարիքը, հասունությունը և այլ հանգամանքներ՝ ներառելով խորհրդատվությունը և աջակցությունը, միաժամանակ խուսափելով երեխաներին շահագործելուց: Խնամքից դուրս եկող երեխաներին պետք է խրախուսել, որպեսզի նրանք մասնակցեն հետխնամքային կյանքի ծրագրմանը: Հատուկ կարիք ունեցող երեխաները պետք է օգտվեն համապատասխան աջակցման համակարգից: Պետական և մասնավոր հատվածները պետք է խնամքի տարբեր կառույցներից, որպես խթանման միջոց, աշխատանքի տեղավորեն երեխաներին, հատկապես հատուկ կարիք ունեցողներին:

133. Հատուկ աշխատանքներ պետք է կատարել յուրաքանչյուր երեխայի համար՝ ներգրավելով համապատասխան մասնագետի, ով կհեշտացնի նրա կյանքը խնամքից հետո :

134. Հետխնամքային խնամքը պետք է նախապատրաստվի հնարավորինս շուտ, քանի դեռ երեխան գտնվում է խնամքի ներքո:

135. Շարունակական կրթական և մասնագիտական ուսուցման հնարավորությունները պետք է կազմեն կյանքի հմտությունների ուսուցման հիմնական մասը, որպեսզի օգնեն երիտասարդներին դառնալու ֆինանսապես անկախ և ստեղծելու իրենց սեփական եկամուտը:

136. Խնամքից հեռանալիս, ինչպես նաև խնամքին հաջորդող ժամանակահատվածում, երիտասարդներին ֆինանսական աջակցության հետ մեկտեղ պետք է տրամադրել հասանելի սոցիալական, իրավական ու առողջապահական ծառայություններ:

VIII. ԻՐԵՆՑ ՀԱՄԱՐ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԿՐԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Ա. ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔՆ ԻՐԵՆՑ ԵՐԿՐԻՑ ԴՈՒՐՍ

137. Սույն Ուղեցույցը պետք է կիրառվի բոլոր պետական և մասնավոր կազմակերպությունների և այն անձանց կողմից, ովքեր ներգրավված են այլ երկրում երեխայի խնամքը կազմակերպելու գործընթացում՝ լինի դա բուժման, ժամանակավոր հյուրընկալման, արձակուրդային խնամքի կամ այլ նպատակներով:

138. Այդ գործընթացում ներգրավված պետությունները պետք է վստահեցնեն, որ խնամք իրականացնող մարմինը պատասխանատվություն է կրում հատուկ չափորոշիչների սահմանման համար, մասնավորապես այն չափորոշիչների, որոնց միջոցով հյուրընկալող երկրում ընտրվում են խնամողները, ինչպես նաև խնամքի որակը և հետագա վերահսկողությունը:

139. Համապատասխան միջազգային համագործակցության և կոնկրետ իրավիճակներում երեխայի պաշտպանության նպատակով պետությունները պարտավորված են վավերացնել 1996 թվականի հոկտեմբերի 19-ին ընդունված՝ Ծնողական պատասխանատվության և երեխաների պաշտպանության մասին Հաագայի Արդարադատության կոնվենցիան, կիրառել օրենքը և համագործակցել օրենքի շրջանակներում:

Բ. ԱՐԴԵՆ ԻՍԿ ԵՐԿՐԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

140. Սույն Ուղեցույցը, ինչպես համապատասխան միջազգային այլ դրույթներ, պետք է կիրառվեն բոլոր պետական և մասնավոր կազմակերպությունների և անձանց կողմից, ովքեր ներգրավված են այլ երկրում գտնող երեխայի խնամքի գործընթացում՝ անկախ պատճառներից:

141. Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխաներին անհրաժեշտ է նույն մակարդակի պաշտպանություն ու խնամք, ինչպիսիք անհրաժեշտ են տվյալ երկրում ապրող երեխային:

ԱՅԼ ԵՐԿՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԸ

Սույն Ուղեցույցը կարևորում է, որ երկրից դուրս գտնվող երեխաներն օգտվեն խնամքի և պաշտպանության միևնույն մակարդակներից, ինչ՝ իրենց երկրում ապրող երեխաները:

© C. Martinelli

ԱՐԴՅՈ՞Ք ՊԵՏԱԿԱՆ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

... վստահեցնում է, որ մաքսատունը և միգրացիոն գործակալները համապատասխան նրբանկատությամբ են վերաբերվում երկրից դուրս գտնվող երեխաների պահանջները բավարարելուն,

... ապահովում է կապը համապատասխան կազմակերպությունների և բաժինների հետ, ինչպիսիք են միգրացիոն ծառայությունը, սոցիալական աշխատանքի բաժինը և ոստիկանությունը,

... կազմակերպում է հանդիպում պատասխանատու անձի կամ կազմակերպության հետ, որպեսզի աջակցի երեխային՝ որոշումներ կայացնելու գործընթացում,

... սահմանել է այլընտրանքային խնամքի տարբերակներ երկրից դուրս գտնվող երեխաների համար, և արդյո՞ք դրանք համապատասխանում են երեխայի ազգային, մշակութային և կրոնական սկզբունքներին,

... երաշխավորում է դիվանագիտական կամ ուսումնասիրման այլ ուղիներ, որոնց միջոցով կատարվում են ռիսկի համապատասխան գնահատումներ նախքան երեխայի՝ հայրենի երկիր վերադառնալը կամ ընտանիքի հետ վերամիավորվելը,

... տրամադրում է բավարար հնարավորություն երեխային ծնողների կամ ընդլայնված ընտանիքի հետ միավորելու համար՝ նախքան վճռական որոշումներ կայացնելը, ինչպիսին է, օրինակ, որդեգրումը:

142. Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխաների խնամքի վերաբերյալ դրույթները սահմանելիս (ազգային, միգրացիոն, մշակութային և կրոնական) պետք է յուրաքանչյուր երեխայի դեպքը քննարկել առանձին:

143. Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխաները, ինչպես նաև տվյալ երկրում մշտական բնակության տեղ չունեցող երեխաները չպետք է զրկված լինեն իրենց ազատություններից միայն այն պատճառով, որ խախտել են տվյալ երկրի օրենքը տեղաշարժման վերաբերյալ:

144. Թրաֆիքինգի զոհ դարձած երեխաները չպետք է պահվեն ոստիկանությունում կամ պատասխանատվություն կրեն իրենց կողմից կատարված անօրինական քայլերի համար:

145. Ուղեկից չունեցող երեխային պետությունը պետք է կցի խնամակալ կամ խնամք իրականացնող որևէ կազմակերպության ներկայացուցիչ, ով կուղեկցի երեխային նրա կարգավիճակում և որոշում կայացնելու գործընթացում:

146. Երբ առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխան ընդունվում է խնամքի, ամեն տեսակի խելամիտ ջանք պետք է գործադրել, որպեսզի գտնվի նրա ընտանիքը կամ վերականգնվեն ընտանեկան կապերը, երբ դա բխում է երեխայի լավագույն շահերից ու չի վտանգում ներգրավված մյուս դերակատարներին:

147. Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխայի հետագա քայլերը մշակելու համար համապատասխան պետական և սոցիալական ծառայությունները պետք է կազմեն փաստաթղթեր և տեղեկատվություն ձեռք բերեն՝ երեխայի ռիսկերի և ընտանիքի պայմանների գնահատման համար:

148. Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխաները չպետք է վերադարձվեն իրենց երկիր, եթե՝

ա) համաձայն ռիսկի և անվտանգության գնահատման՝ կան պատճառներ վստահ լինելու, որ վտանգի տակ է երեխայի անվտանգությունը,

բ) նախքան վերադարձի իրականացումը որևէ խնամող, օրինակ՝ ծնողները կամ ազգականները կամ որևէ պետական կազմակերպություն, երեխայի հայրենի երկրում չի համաձայնել պատասխանատվություն կրել նրա համար և ապահովել համապատասխան խնամքով ու պաշտպանությամբ,

գ) երեխայի լավագույն շահերից չբխող այլ պատճառներ կան՝ ըստ իրավասու մարմինների գնահատականի:

149. Անհրաժեշտ է խթանել և ամրապնդել համագործակցությունը պետությունների, տեղական իշխանությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև:

150. Հյուպատոսական ծառայությունների, երեխայի բնակության երկրի իրավական ներկայացուցիչների արդյունավետ ներգրավումը կամ դրանից չօգտվելը պետք է բխի երեխայի և ընտանիքի շահերից:

151. Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխաների կյանքի ապահովման պատասխանատու անձը պետք է պարբերաբար հաղորդակցվի երեխայի և նրա ընտանիքի հետ, եթե դա չի հակասում երեխայի կարիքներին կամ բխում է նրա լավագույն շահերից:

152. Որդեգրումը կամ քաֆալան՝ ըստ իսլամական իրավունքի, չպետք է դիտարկվի որպես առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխայի համար հարմար նախնական տարբերակ: Պետությունները այս տարբերակը պետք է քննարկեն այն դեպքում, երբ պարզ դառնա երեխայի խնամողների, ընդլայնված ընտանիքի գտնվելու վայրը:

IX. ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

Ա. ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

153. Սույն Ուղեցույցը պետք է կիրառվի նաև արտակարգ իրավիճակներում, որոնք առաջացել են բնական կամ մարդու կողմից ստեղծված աղետների պատճառով՝ ներառյալ միջազգային և ոչ միջազգային զինված գործողությունները, ինչպես նաև երկրի զավթումը օտարերկրացիների կողմից: Ծնողական խնամքից դուրս մնացած երեխաների խնամքն իրականացնող անհատները և կազմակերպություններն արտակարգ իրավիճակներում պետք է խստորեն հետևեն սույն Ուղեցույցին:

154. Նման պայմաններում պետությունը կամ տվյալ շրջանում գործող տեղական ինքնակառավարման մարմինները, միջազգային հանրությունը, երեխայի խնամք իրականացնող տեղական, ազգային և օտարերկրյա միջազգային կազմակերպությունները պետք է ուշադրություն դարձնեն հետևյալին.

ա) ապահովել, որ առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխայի խնամքով զբաղվող կազմակերպությունը և անձինք փորձառու լինեն, ունենան համապատասխան վերապատրաստում և համապատասխան վարվելակերպ,

բ) զարգացնել, ըստ անհրաժեշտության, ժամանակավոր ու երկարաժամկետ ընտանիքահեն խնամք,

գ) օգտագործել շուրջօրյա խնամքը միայն որպես ժամանակավոր միջոց մինչև ընտանիքահեն խնամքի զարգացումը,

դ) արգելել նոր՝ միաժամանակ երեխաների մեծ խմբերին երկարատև շուրջօրյա խնամք ապահովող հաստատությունների հիմնումը,

ե) կանխել երեխաների անդրսահմանային տեղահանումը, բացառությամբ 160-րդ պարբերությունում նկարագրված դեպքերից,

զ) պարտադիր կերպով համակցել ջանքերը ընտանիքը գտնելու, վերամիավորելու ուղղությամբ:

Անջատման կանխարգելում

155. Կազմակերպություններն ու իշխանությունները պետք է գործադրեն բոլոր ջանքերը երեխաների անջատումն իրենց ծնողներից կամ առաջնային խնամողներից կանխելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ անջատումը բխում է երեխայի լավագույն շահերից, և ապահովեն, որ իրենց գործողություններով անուղղակիորեն չեն խրախուսում ընտանիքի անջատումը՝ մատուցելով ծառայություններ ու տալով արտոնություններ միայն երեխաներին, այլ ոչ թե ընտանիքներին:

156. Երեխայի ծնողների կամ առաջնային խնամողների կողմից նախաձեռնված անջատումը պետք է կանխվի.

ա) ապահովելով, որպեսզի բոլոր տնային տնտեսությունների համար մատչելի լինեն հիմնարար սնունդը, բժշկական պարագաները ու այլ ծառայությունները, ներառյալ՝ կրթությունը,

բ) սահմանափակելով շուրջօրյա խնամքի տարբերակների զարգացումն ու թույլատրելով դրանց օգտագործումը այն դեպքերում, երբ դա բացառապես անհրաժեշտ է:

ԵՐԵԽԱՆԵՐՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

Սույն Ուղեցույցը պետք է կիրառվի բոլոր արտակարգ իրավիճակներում՝ հիմնականում նպատակ ունենալով երեխայի վերամիավորումը նրա ընտանիքի հետ նախքան որևէ այլ վճռական որոշում կայացնելը:

ԱՐԴՅՈ՞Ք ՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

... պահանջում է տեղական և միջազգային կազմակերպություններից հստակ քաղաքականություն մշակել արտակարգ իրավիճակների հաղթահարման համար և աջակցել այն ընտանիքներին ու համայնքներին, որտեղ երեխաներն ունեն խնամքի ու պաշտպանության կարիք,

... երաշխավորում է ուղեկից չունեցող երեխաների գրանցումը և ապահովում հավաքագրված տվյալների գաղտնիությունը. արդյո՞ք պետության առաջնային նպատակն է վերամիավորել ընտանիքները,

... արդյո՞ք համայնքներում մշակվում են խնամքի համապատասխան տարբերակներ այն երեխաների համար, որոնց վերամիավորումն ընտանիքների հետ անհնար է,

... արդյո՞ք պահպանվում են Ուղեցույցի այն կետերը, որոնք ուղղված են երեխաների և ընտանիքների վերամիավորմանը նախքան վճռական որոշումներ կայացնելը, օրինակ՝ որդեգրումը:

Բ. ԽՆԱՄՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

157. Համայնքները պետք է ակտիվ մասնակցություն ունենան երեխայի խնամքի և պաշտպանության մոնիթորինգի գործընթացում՝ ելնելով կոնկրետ իրավիճակից:

158. Երեխայի խնամքը հարազատ համայնքում, այդ թվում նաև խնամատար ընտանիքում, պետք է խրախուսվի, քանի որ այն ապահովում է շարունակական շփում և զարգացում:

159. Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխաները կարող են գտնվել բարձր ռիսկայնության, բռնության կամ շահագործման իրավիճակում. վերահսկողությունը հատուկ աջակցություն պետք է նախատեսի նման երեխաների պաշտպանության համար:

160. Արտակարգ իրավիճակներում գտնվող երեխաները չպետք է տեղափոխվեն այլ երկիր, նրանց այլընտրանքային խնամքը պետք է կազմակերպվի մշտական բնակության վայրում, բացառությամբ երեխայի առողջական, բժշկական կամ անվտանգության շահերից բխող դեպքերի: Այդ դեպքերում այն պետք է իրականացվի երեխայի բնակության վայրին հնարավորինս մոտ, ծնողների կամ օրինական խնամողների ուղեկցությամբ և վերադարձի հստակ ծրագրով:

161. Եթե ընտանիքի հետ վերամիավորումը հնարավոր չէ իրականացնել նախատեսված ժամանակահատվածում կամ հակասում է երեխայի լավագույն շահերին, պետք է նախատեսել կայուն ու հստակ լուծումներ, ինչպիսիք են որդեգրումը կամ քաֆալան՝ ըստ իսլամական իրավունքի, իսկ դրանց ձախողման դեպքում պետք է ի նկատի ունենալ այլ երկարատև լուծումներ, ինչպիսիք են խնամատարությունը կամ համապատասխան շուրջօրյա խնամքը՝ ներառյալ խմբային տները և վերահսկվող այլ բնակության ձևաչափերը:

Գ. ՈՐՈՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՈՒՄ

162. Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխաների բացահայտումը, գրանցումը և փաստաթղթավորումը առաջնային են յուրաքանչյուր արտակարգ իրավիճակում և պետք է կատարվեն պարտաճանաչ կերպով ու հնարավորինս արագ:

163. Գրանցման աշխատանքները պետք է իրականացվեն պետական իշխանության անմիջական վերահսկողության ներքո, ինչպես նաև լիազորված անձանց կողմից, ովքեր պատասխանատու են տվյալ հարցի լուծման համար:

164. Երեխայի մասին անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման գաղտնիությունը պետք է պահպանվի, տեղեկատվությունը պետք է լինի պատշաճ կերպով համակարգված և ապահով վայրում, ինչպես նաև ապահով փոխանցվի կամ պահպանվի, ներկայացվի կամ տրամադրվի լիազորված մարմիններին՝ որոնման, ընտանիքի վերամիավորման համար:

165. Բոլոր նրանք, ովքեր ներգրավված են ընտանիքի անդամների, առաջնային իրավական աջակցության կամ խնամողների որոնման աշխատանքներում, պետք է գործեն՝ համաձայն ընդունված համակարգի՝ օգտագործելով ձևաչափեր և փոխադարձ համատեղելի ընթացակարգեր: Նրանք պետք է ապահովեն, որ երեխան կամ այլ հետաքրքրված անձինք չեն ենթարկվի վտանգների:

166. Հարաբերությունների իսկությունն ու երեխայի և ընտանիքի անդամների վերամիավորվելու պատրաստակամության հաստատումը պետք է ճշտվի ամեն երեխայի համար: Ընտանիքի միավորմանը որևէ կերպ խոչընդոտող ոչ մի քայլ չպետք է ձեռնարկվի, ինչպես օրինակ որդեգրումը, անվան փոփոխությունը կամ ընտանիքի հնարավոր բնակության վայրից հեռու տեղափոխումը, մինչև որ ընտանիքը գտնելու բոլոր ջանքերը չսպառվեն:

167. Երեխայի տեղափոխման մասին համապատասխան արձանագրությունները պետք է կատարվեն և պահվեն ապահով վայրում՝ հետագա վերամիավորման համար, որը կարող է իրականացվել ապագայում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀՂՈՒՄՆԵՐ

ՄԱԿ-ի՝ **Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան**

- **Կոնվենցիայի ողջ տեքստը** http://www2.ohchr.org/english/law/crc.htm
- **Երեխայաընկերական տարբերակ** http://www.unicef.org/voy/media/rights_leaflet.pdf
- **ՄԱԿ-ի**՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան տեղական լեզվով http://www.unicef.org/voy/explore/rights/explore_2781.html

Աֆրիկայի կանոնադրությունը երեխայի իրավունքների և բարեկեցության մասին
http://www.africa–union.org/child/home.htm

Եվրոպայի խորհրդի առաջարկությունները խնամքի հաստատություններում գտնվող երեխաների **իրավունքների վերաբերյալ Rec(2005)5** http://www.coe.int/familypolicy (ընտրել Երեխաների խնամքը հաստատությունում՝ Էստոնիայում, Իռլանդիայում, Լեհաստանում, Լիտվայում, Ռուսաստանում, Հունաստանում, Միացյալ Թագավորությունում, Չեխիայում և Սերբիայում)

Երեխաների խնամքի որակի չափորոշիչներ(Q4C) – http://www.quality4hildren.info

Եվրոպայի խորհուրդ և Միջազգային «ՍՕՍ մանկական գյուղեր»՝ Խնամք ստացող երեխաներ և երիտասարդներ. Ճանաչիր քո իրավունքները – http://www.coe.int/t/transversalprojects/children/News/enfants%20institution/text%20flyer_en.asp

Միջազգային «ՍՕՍ մանկական գյուղեր» – http://www.sos–childrensvillages.org

Միջազգային սոցիալական ծառայություններ – http://www.iss–ssi.org/

ՀԿ-ների խումբ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի համար – http://www.childrightsnet.org/

Երեխայի իրավունքների տեղեկատվական ցանց – http://www.crin.org

Խնամքի ցանց http://crin.org/bcn/

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ **(UNICEF)** http://www.unicef.org

Բարելավված խնամքի ցանց և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ: Երեխաների ֆորմալ խնամքի ցուցիչների չափման ձեռնարկ – http://www.crin.org/BCN/details.asp?id=19618&themeID =1001&topicID =1011

ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՂ՝
Միջազգային «ՍՕՍ մանկական գյուղեր»
Ծրագրերի զարգացում
Հերման Գմայների փող. 51
6010 Ինսբրուկ, Ավստրիա
Հեռ.՝ +43/1/3102398
Ֆաքս՝ +43/1/310239820
էլ. փոստ՝ lao@sos–kd.org
www.soschildrensvillages.org

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝
Քրիստիան Փոշ
ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԸ ԵՎ ՇԱՐՎԱԾՔԸ՝
Միջազգային «ՍՕՍ մանկական գյուղեր»

Վերահրատարակման թույլտվությունն ընձեռվել է ՄԱԿ-ի կողմից՝ անվճար:
Թույլտվությունը անգլերեն հրատարակության ոչ բացառիկ իրավունքների համար է:
Նախատեսված չէ կոմերցիոն նպատակների համար:
Հրատարակության ամսաթիվը՝ 2010 թ. նոյեմբեր:

WWW.SOS-CHILDRENSVILLAGES.ORG

ՍՕՍ ՄԱՆԿԱԿԱՆ
ԳՅՈՒՂԵՐ
Սիրող ընտանիք յուրաքանչյուր երեխայի համար